ԳԱԶԱՅԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՍՐԱՅԵԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ (2023թ)

Իսրայելի պաշտպանության բանակի (ՑԱԽԱԼ) գործողությունները Գազայի հատվածում, որը սկսվել էր 2023 թվականի հոկտեմբերին, արժեքավոր դաս են քաղաքային կառուցապատման պայմաններում ռազմական գործողություններ վարելու համար: Չնայած այն հանգամանքին, որ մարտական գործողությունների բազմաթիվ առանձնահատկություններ բնորոշ էին միայն Գազային, այնուամենայնիվ ձեռք բերված փորձը լայնորեն կիրառելի է նաև ամնուր: Աշխատությունում փորձ է արվել բացահայտել Մեծ Բրիտանիայի ցամաքային զորքերի համար արդիականության մասը: Միարժամանակ աշխատությունը մարտավարության ուսումնասիրություն է և չի ընդգրկում ավելի լայն օպերատիվ և ռազմավարական բաղադրիչներ:

1. Օպերատիվ իրավիճակը 2023 թվականի հոկտեմբերի 7-ից նոյեմբերի 24-ը

ՀԱՄԱՍ-ը սկսեց ցամաքային ներխուժումը Իսրայել 2023 թվականի հոկտեմբերի 7-ին՝ Իսրայելի սահմանային պաշտպանության մանրակրկիտ սինխրոնացված ճեղքումով: Չնայած «Իզզ ադ-Դին ալ-Կասամի» (ՀԱՄԱՍ-ի ռազմական թև) մարտական խմբերը որոշ ժամանակ հրահանգներ էին ստանում իսրայելական գյուղերի և ՑԱԽԱԼ-ի ֆորպոստերի գրոհն ու գրավումը նախապատրաստելու և ապահովելու համար, այդուհանդերձ ՀԱՄԱՍ-ի առանձին դասակների համար այսպիսի ուսուցումը ինչ-որ կերպ դարձել էր քարացած: Հոկտեմբերի 7-ին գործողության նախապատրաստումն իրականացվեց ոչ մեծ խմբերի կողմից, ընդ որում ՀԱՄԱՍ-ի գումարտակներին հրահանգները տրվում էին առանձին-առանձին, այնպես որ միայն հավաքի ժամանակ զինծառայողները ստույգ ցուցումներ էին ստանում նպատակների և գործողության մասշտաբների մասին: Այսպիսի ճեպազրույցները մանրամասնում էին ՑԱԽԱԼ-ի պաշտպանական դիրքերի և հրամանատարական կետերի, ռազմական օբյեկտների և կիբուցների գտնվելու վայրերը, իսկ որոշ դեպքերում էլ ՑԱԽԱԼ-ի հրամանատարների և տեղական պաշտոնյաների աշխատանքային ու բնակելի տարածքների գտնվելու վայրերը: Ճեղքման ստորաբաժանումները գործում էին կապի խիստ կարգապահության պահպանման պայմաններում և գործնականում չէին կիրառում բջջային հեռախոսներն ու կապի այլ համակարգերը, քանի դեռ չէին բախվել ՑԱԽԱԼ-ին:

Սահմանը ճեղքելիս ՀԱՄԱՍ-ը համակարգեց դիտարկման և հետախուզության միջոցների ոչնչացումը (Գազայի սահմանի երկայնքով կապի տեսախցիկներն ու ալեհավաքները խոցելու համար)՝ կիրառելով ԱԹՍ-ներ, դիպուկահարներ և հակատանկային կառավարելի հրթիռներ (ՀՏԿՀ): Դա միաժամանակ ՑԱԽԱԼ-ի հրամանատարական կետերին զրկեց տեղեկատվություն ստանալու հնարավորությունից և ընդհատեց ենթականերին հրահանգների փոխանցումը: Այնուհետև 50 կետերում բուլդոզերների, ծակող և երկարացված լիցքերով իրականացվեց սահմանային արգելափակոցների ճեղքում: Բացի այդ, վեց մոտոպարապլաններ փորձեցին հասնել Իսրայելի տարածքի խորքում գտնվող երեք կետերի, իսկ յոթ արագընթաց մոտորանավակները ծովային դեսանտ նետելու փորձ կատարեցին իսրայելական ծովափին: Ընդանուր առմամբ հարձակմանը մասնակցեցին ՀԱՄԱՍ-ի զինված կազմավորումների մինչև 2000 մարտիկներ և Գազայի այլ զինված խմբավորումների ներկայացուցիչներ: Սկզբում գրոհայինները բաժանվեցին մարտական խմբերի, որոնցից յուրաքանչյուրը ստացավ հատուկ առաջադրանքներ և պատրաստված հետախուզական տվյալներ իսրայելցի առանձին հրամանատարների և կայազորների գտնվելու վայրերի վերաբերյալ: Անմիջական հարձակման ենթարկվեց ՑԱԽԱԼ-ի զորամիավորումների և ռազմական ոստիկանության շտաբները: Քանի որ մարտարշավը տեղի էր ունեցել Իսրայելի ազգային տոնի ժամանակ, ՑԱԽԱԼ-ը զրկվել էր բավարար իրավիճակային իրազեկումից, պատասխան գործողությունները համակարգելու համար կորցրել էր կապի միջոցների հասանելիությունը և իր տրամադրության տակ չուներ օպերատիվ ռեզերվ: Միաժամանակ ՀԱՄԱՍ-ի խմբերը զբաղեցրին ճանապարհային հանգույցները՝ խոչընդոտելով ՑԱԽԱԼ-ի զորքերի տեղաշարժին:

Ռազմական գործողությունների վարման նախնական պայմանների ստեղծման տեսանկյունից ՀԱՄԱՍ-ի զինված կազմավորումների մասնակիցները դրա իրականացման ընթացքում զգալիորեն շեղվեցին սեփական պլանից: Արգելափակոցներում նկատելով առկա բացերը՝ Իզզ ադ-Դին ալ-Քասամ բրիգադի գրոհային

խմբերի հետևից Իսրայելի տարածք ներխուժեցին Գազայի մոտ 1000 բնակիչներ, ովքեր դարձան հոկտեմբերի 7-ի սոցիալական ցանցերում հրապարակումների և տեսանյութերի զգալի մասի աղբյուրը: Այդ պահին ՀԱՄԱՍ-ի զինծառայողների շրջանում կարգապահությունը, կարծես, խախտվել էր: Նախնական պլանի համաձայն ՀԱՄԱՍ-ը մտադիր էր ամրապնդվել գրավված դիրքերում և օգտագործել պատանդներին, որպեսզի բարդացնի ՑԱԽԱԼ-ի կողմից այդ տարածքները կռվով ետ նվաճելու ցանկությունը: ՀԱՄԱՍ-ն իր հետ պարենամթերք, բժշկական և մարտական սարքավորումներ էր բերել երկարատև մարտական գործողություններ վարելու համար: Ծավալված քառասային սպանդը ուշադրությունը շեղեց մտածված դիրքային պաշտպանության նախապատրաստությունից: Ինչ-որ իմաստով ավերածությունները հանգեցրին քաոսի, որը բարդացրեց իրավիճակը հոկտեմբերի 7-ին վերահսկողության տակ վերցնելու համար: Միևնույն ժամանակ, ՀԱՄԱՍ-ի կրակային դիրքերի բացակայությունը շատ ավելի դյուրին դարձրեց ՑԱԽԱԼ-ին հաջորդող օրերին գրավված տարածքները կռվով ետ նվաճելու համար պայքարը:

ՑԱԽԱԼ-ի զորքերը չափազանց արագ մոբիլիզացվեցին: Առաջին 24 ժամը հիմնականում ինքնամոբիլիզացման գործընթաց էր, երբ արձակուրդում գտնվող պահեստազորայիններն ու զինծառայողները շտապեցին Գազայի հատված՝ առանց հստակ ենթակայության և ձևավորված մարտակարգի: Դա հանգեցրեց անձնակազմի և տեխնիկայի կորուստների: Ուսանելի օրինակ է ՑԱԽԱԼ-ի CH-53 ուղղաթիռի հետ կապված իրավիճակը, որը վարում էր Իսրայելի ՌՕՈՒ-ի նախկին օդաչուն: Նա վերցրեց դեսանտայինների մեկ դասակ և ուղղակիորեն տեղափոխեց մարտական գործողությունների գոտի՝ առանց պատասխանատվության գոտում փոխադարձ համաձայնեցվածության: Չնայած ստորաբաժանումը հաջող վայրէջք կատարեց, սակայն ուղղաթիռը խոցվեց: Չնայած այն փաստին, որ Իսրայելի տարբեր ռազմական կազմավորումների զորքերի սկզբնական խառնաշփոթը քառասային մարտակարգ էր ստեղծում, այդուհանդերձ լրջորեն ազդում էր նաև ՀԱՄԱՍ-ի գրավյալ տարածքներում զինված կազմավորումների մաններելու հնարավորությունների վրա: Առաջին պատասխան հարվածն իրականացնելու համար ՑԱԽԱԼ-ի զորքերի կառավարումը բարդացավ նաև նրանով, որ ՀԱՄԱՍ-ը ոչնչացրեց բազմաթիվ ալեհավաքներ, որոնք աջակցում էին Գազայի շուրջ ռազմական հրամանատարության և հաղորդակցության համակարգերին, բացի այդ մեծաքանակ իսրայելական սարքավորումների առգրավումը ստիպեց ՑԱԽԱԼ-ին ռազմական հաղորդակցությունների համար տարածել նոր ծածկագրման բանալիներ: Դա նշանակում էր, որ պատերազմի առաջին 48 ժամվա ընթացքում ՑԱԽԱԼ-ը ստիպված էր օգտագործել քաղաքացիական կապի միջոցներ, ինչը, համապատասխանաբար, չէր ապահովում օպերատիվ անվտանգություն:

Առաջին 48 ժամից հետո ՑԱԽԱԼ-ի զորահավաքն ավելի կազմակերպված դարձավ: Պահեստազորայինները զորակոչվեցին, խմբավորվեցին և ուղարկվեցին հավաքակայաններ: Մարտական գործողությունների շրջանում ռազմական կազմավորումների հայտնվելը հրամանատարությանը հնարավորություն ընձեռնեց անցնել լիարժեք հակահարձակման: ՑԱԽԱԼ-ը հիմնականում վերականգնեց տարածքի վերահսկողությունը 72 ժամվա ընթացքում, իսկ ևս երեք օր անց ավարտվեց մաքրման գործողությունները, որոնց ընթացքում վերացվեցին դիմադրության մնացած օջախները: Ներթափանցողներից ոմանք իսրայելական տարածքում մնացին մինչև երեք շաբաթ, սակայն առաջին հինգ օրից հետո օպերատիվ առումով նրանց ներկայությունը աննշան էր :

Ի պատասխան հոկտեմբերի 7-ի հարձակման՝ Իսրայելի նախարարների կաբինետը պատերազմ հայտարարեց ՀԱՄԱՍ-ին: Հաշվի առնելով, որ Իսրայելի կառավարությունը, չէր սպասում այդպիսի հարձակման, Իսրայելի պատերազմի նպատակների ճշգրիտ ձևակերպումը որոշ ժամանակ պահանջեց, և դրանց իրականացման որոշ սկզբունքներ դեռ քննարկման առարկա էին: Այնուամենայնիվ, առաջին հինգ օրվա ընթացքում ՑԱԽԱԼ-ի հրամանատարությունը միջոցառումներ էր պլանավորում երեք հիմնական ռազմական նպատակների հասնելու համար.

1.ՀԱՄԱՍ-ի ռազմական ենթակառուցվածքների, ուժերի և միջոցների ոչնչացումն այն աստիճանի, որ նրանք այլևս չսպառնան Իսրայելին;

2.Պատանդների վերադարձը;

3. ՀԱՄԱՍ-ի մարտական հզորության վերականգնման հնարավորությունը բացառելու համար ՀԱՄԱՍ-ին Գազայում փաստացի կառավարության կարգավիճակից զրկելը:

Կառավարության կողմից հաստատված այս նպատակները դարձան օպերատիվ պլանավորման հիմքը Իսրայելի տարածքի նկատմամբ վերահսկողության վերականգնումից հետո: Իսրայելցի նախարարների կողմից առանձին պահերի համար ձևակերպված այլ նպատակները, քաղաքական բնույթ էին կրում:

ՑԱԽԱԼ-ի սպաները հանգեցին այն եզրակացության, որ Գազայի հատվածում ՀԱՄԱՍ-ի կողմից վերահսկողության հնարավորությունից զրկելու համար անհրաժեշտ է ցամաքային ներխուժում: ՑԱԽԱԼ-ը նախկինում էլ էր ներխուժել Գազայի հատված, ինչպես, օրինակ, 2014 թվականի «Պաշտպանական բնագիծ» գործողության ժամանակ, սակայն զորքերի մանևրելու համար տարածքային առումով 2008-2023թթ. միջամտությունների նպատակները շատ ավելի քիչ հավակնոտ էին: ՑԱԽԱԼ - ն ուներ Գազայի ամբողջական օկուպացիայի պլաններ, որոնք մշակվել էին հրամանատարաշտաբային զորավարժություններում: Այնուամենայնիվ, զորքերի քանակը, որը գնահատվել էր այդ պլանների իրականացման համար, պահանջում էր պահեստազորայինների զորակոչում: 2023 թվականին նախատեսված գործողությբբերի մասշտաբը կրում էին ուժերի նպատակային կուտակման և երկարատև պլանավորման անհրաժեշտություն:

Նախապատրաստման համար հատկացված ժամանակահատվածը, ըստ ՑԱԽԱԼ-ի պլանավորողների, սահմանափակվել էր երեք գործոնով: Նախ, հոկտեմբերի 7-ին տեղի ունեցած ցամաքային հարձակման հետ միաժամանակ ՀԱՄԱՍ-ը սկսել էր զանգվածաբար հրթիռակոծել իսրայելական ռազմական և քաղաքացիական օբյեկտները: Դրան ի պատասխան, Իսրայելի ՌՕՈՒ-ն, Գազայում ՀԱՄԱՍ-ի բացահայտված թիրախների դեմ ավիահարվածների կիրառմամբ անմիջապես լայնածավալ արշավ իրականացրեց և հայտնաբերեց հրթիռների արձակման վայրերը: Չնայած այս ջանքերին, հաստատվեց, որ հրթիռների արձակումը կշարունակվի, եթե ՀԱՄԱՍ-ը կարողանա զենքը թաքցնել ստորգետնյան թաքստոցներում, և որ գնդակոծությունը կկանխվի միայն Գազայի հատվածի տարածքների ֆիզիկական զավթումից հետո:

Երկրորդ՝ ՑԱԽԱԼ-ի պլանավորողները կարծում էին, որ հոկտեմբերի 7-ի հարձակման արդյունքում ի հայտ եկած հնարավորությունների պատուհանը, միջազգային հանրության կողմից Իսրայելի գործողություններին ազատություն կտա, բայց այն կարող է շուտով փակվել: Այս համոզմունքը բխում էր նախորդ մարտական գործողությունների փորձից: Իրոք, հոկտեմբերի 7-ից քիչ առաջ ՑԱԽԱԼ-ի ավագ պլանավորողներից մեկը հեղինակներից մեկին խոստովանել էր, որ ՀԱՄԱՍ-ի հետ էսկալացիայի նախորդ փուլերի ժամանակ, օրինակ՝ 2021 թվականին, «պատուհանի»

փակումը, որի շրջանակներում կարելի էր գործողություններ իրականացնել, թույլ չի տվել հակամարտության դինամիկան փոխելու համար հասնել որևէ կրիտիկական շեմի: 2023 թվականի հոկտեմբերին ՀԱՄԱՍ-ի ներխուժման մասշտաբները նշանակում էին, որ ՑԱԽԱԼ-ն ակնկալում էր ավելի երկար գործողությունների ազատության ժամանակահատված, բայց ժամանակը դեռ համարվում էր սահմանափակ ռեսուրս, և դա ծրագրավորողների մոտ համոզմունք էր ստեղծում, որ նրանք պետք է ավելի արագ գործեն:

Երրորդ, չնայած հոկտեմբերի 7-ին «Հեզբոլլահը» ՀԱՄԱՍ-ի հետ չէր համակարգում Իսրայելի հյուսիսային շրջանների դեմ որևէ գործողություն, այնուամենայնիվ հաջորդ օրերին սկսեց հրթիռակոծել իսրայելական բնակավայրերը և իր զինված խմբավորումների մեծ թվով զինյալների մարտական պատրաստականության բերեց: Քանի որ Հյուսիսային թատերաբեմում լուրջ էսկալացիայի սպառնալիքը համընկել էր Գազայի հատվածում ուժերի տեղակայման հետ, ՑԱԽԱԼ-ը գնահատեց, որ անհրաժեշտ է արագ ավարտել այդ հատվածում գործողությունների ամենաինտենսիվ մասը՝ քաղաքների գրավումը, որպեսզի հետագայում զորքերը տեղափոխի հյուսիս: Բացի այդ, որքան երկար շարունակվեր ՀԱՄԱՍ-ի հրթիռակոծությունները, այնքան ավելի հաճախ կօգտագործվեին Iron Dome համալիրի զենիթային կառավարվող հրթիռները՝ բարձրացնելով Իսրայելի խոցելիությունը «Հեզբոլլահի» շատ ավելի հզոր հրթիռային զինանոցի նկատմամբ: Հաշվի առնելով արագ գործելու անհրաժեշտությունը, ՑԱԽԱԼ-ի ցամաքային զորքերի կողմից մշակված պլանը նախատեսում էր առաջխաղացում դեպի Գազա քաղաք՝ երեք ուղղություններով:

Առաջին հերթին, նախատեսվում էր մարտարշավ դեպի Բեյթ Հանունա: Հիմնականում գիշերային հարձակողական գործողությունները թույլ տվեցին ՑԱԽԱԼ-ի զորքերը տեղակայել Գազայում և համոզեցին ՀԱՄԱՍ-ին առ այն, որ իսրայելցիների հարվածներին հակազդելու համար պաշտպանական ամրությունները պետք է ուղղված լինեն հենց այդ ուղղությամբ: Հարձակման երկրորդ ուղղությունը կտրեց Գազա քաղաքը Հարավային Գազայից՝ անցնելով Վադի Գազայի հյուսիսային կողմի երկայնքով կտրվեց քաղաքում ՀԱՄԱՍ-ի զինված կազմավորումների թիկունքային ապահովման ուղիները: Երրորդ ուղղությունը գլխավորն էր և շարժվում էր դեպի հարավ՝ ափի երկայնքով նեղ միջանցքով, որից հետո պետք է շրջվեր դեպի Գազա քաղաք: Ափամերձ ուղղությունը պետք է թույլ տար ՑԱԽԱԼ-ին շրջանցել ՀԱՄԱՍ-ի պատրաստված պաշտպանական կառույցների մեծ մասը: Այսպիսով, պլանը նախատեսում էր երեք մեքենայացված դիվիզիաների միաժամանակյա հարձակում 70 կմ²-ից պակաս տարածքում՝ նպատակ ունենալով 600,000 քաղաքացիական բնակչության շրջանում դիմակայել մոտ 20,000 քաղաքացիական հակառակորդի՝ (մոտավորապես 1,1 միլիոն Վադի Գազայից հյուսիս գտնվող օպերատիվ գոտում՝ համեմատած ՀԱՄԱՍ-ի 40,000 զինյալների հետ ամբողջ Գազայի հատվածում):

Հարկ է նշել, որ լրատվամիջոցներում բազմիցս քննարկվել է Գազայի բնակչության խտությունը՝ պնդելով, որ այն աշխարհի ամենախիտ բնակեցված քաղաքներից մեկն է: Ինչպես քաղաքների մեծ մասում, Գազա քաղաքում նույնպես կան բնակչության չափազանց բարձր խտության առանձին օջախներ, մինչդեռ ամբողջ հատվածում խտության ցուցանիշը գտնվում է ժամանակակից քաղաքներին բնորոշ նորմայի սահմաններում: Ճանաչել, որ Գազան հագեցած չէ բացառապես քաղաքային կառույցներով, շատ կարևոր է, որովհետև այն դարձնում է կիրառելի այլ պաշտպանական գերատեսչությունների համար՝ ռազմական այլ թատերաբեմերում:

Ծրագրված հարձակողական գործողությունները սկսվեցին հոկտեմբերի 27-ի գիշերը և զգալի հաջողություն բերեցին, այնպես որ նոյեմբերի 24-ին գերիներին պատանդների հետ փոխանակելու համար հրադադար հայտարարելու պահին Գազա քաղաքի զգալի մասը գտնվում էր ՑԱԽԱԼ-ի վերահսկողության տակ: Հետագայում ՑԱԽԱԼ-ը գործողություններ իրականացրեց Խան-Յունիսում, իսկ հոդվածը գրելու պահին (2024 թվականի հունիս) գործողություններն արդեն իրականացնում էին Ռաֆախում, ինչպես նաև հերթական մարտարշավներ էր իրականացվում Գազա քաղաքում՝ ի պատասխան ՀԱՄԱՍ-ի կողմից քաղաքի այն շրջանների գրավման, որոնք նախկինում մաքրվել էին:

Ունենալով մոտավոր պատկերացում մարտական գործողությունների մասշտաբի և հարձակման ուղղությունների մասին, կարելի է առանձնացնել ՑԱԽԱԼ-ի ստացած մի շարք մարտավարական դասեր, ինչպես նաև ընդգծել, թե հակամարտության ընթացքում ինչ ճշգրտումներ են կատարվել մարտավարության մեջ:

2. Հետևակի գործողությունները մերձամարտում մարտական մեքենաներով և հետիոտն

Երեք ուղղություններից յուրաքանչյուրի համար հարձակման պլանը մշակվել էր դիվիզիաների շտաբների մակարդակով՝ ՑԱԽԱԼ-ի Հարավային հրամանատարության օպերատիվ շտաբի ղեկավարությամբ: Գլխավոր ուղղությամբ (ծովի երկայնքով և դեպի կենտրոն) յուրաքանչյուր դիվիզիա առաջխաղացման 1 կմ-ից պակաս լայնությամբ միջանցքի համար հատկացնում էր երկու բրիգադ: Բրիգադը ներառում էր տանկային, մոտոհետևակային և հետևակային գումարտակներ, ինժեներատեխնիկական գումարտակ, հրետանային դիվիզիոն, հատուկ նշանակության և ապահովման օժանդակող ստորաբաժանումներ: Գումարտակների միջև սահմանազատիչ գծերը անցնում էին քաղաքային թաղամասերի կենտրոնով: Սկզբում առաջ էին շարժվում զրահապատ D9 բուլդոզերները, որոնք նախատեսված էին ինքնաշեն պայթուցիկ սարքերի վնասազերծման համար: Տարբեր թաղամասերում և տարբեր դիվիզիաների միջև բուլդոզերների հատուկ օգտագործումը տարբեր էր, քանի որ տեխնիկան օգտագործվում էր ad hoc ձևաչափով, սակայն, ընդհանուր առմամբ, մարտավարական մոտեցումը նախատեսում էր, որպեսզի D9 բուլդոզերները աշխատեին զույգերով՝ շարժվող Merkava տանկերից մեկ բնագիծ առաջ: Նրանք վերահսկում էին, Namer ծանր զրահափոխադրիչների առաջ շարժումը և հետևակի իջեցումը այն շենքերի մոտ, որոնք տեղակայված էին հարձակվող ստորաբաժանման հետագա խնդրի բնագծերի թևերում: Մոտոհետևակի առաջ շարժման ընթացքում, հետևակի հիմնական ուժերը մաքրում և պահում էին տեղանքը՝ թիկունքից հարձակումները կանխելու համար:

Վերջերս բանավեճ է ծավալվել քաղաքային կառուցապատման պայմաններում մարտական գործողություններում բարձրահարկ շենքերի նշանակության և այն չափի մասին, որով բանակները պետք է մշակեն դրանցում մարտեր վարելու ուղիները: Գազայում ստացված տվյալները վկայում են այն մասին, որ այդ կառույցներն ունեին սահմանափակ ռազմական արժեք: Ինչ վերաբերում է դրանց օգտագործմանը որպես դիտակետեր, ապա վերին հարկերում տեղակայված դիտորդները դժվարանում են հետևել ուղղակիորեն հարակից հատվածին՝ առանց իրենց հայտնաբերելու վտանգի ենթարկելու: Դիտարկումը որոշակի բարձրությունից վեր, ռելիեֆի և կառուցապատման սահմանները միաձուլվում էր, և փողոցները վերածում էր մեռյալ (համա-

տարած գնդակոծման ոչ պիտանի) գոտիների: Բացի այդ, բազմահարկ շենքերում տեղաշարժվող զինծառայողները կորցնում էին ավելի հեռու տեղաշարժվելու հնարավորությունից, քան թույլ էր տալիս կառույցը: Հետևաբար, ՑԱԽԱԼ-ը սահմանեց, որ դիտորդները մնում են առաջին մի քանի հարկերում (հատկապես այն պատճառով, որ ավելի բարձրից դիտումը կարող է ավելի արդյունավետ լինել ԱԹՍ-ների միջոցով), մինչդեռ հետևակային կազմավորումները հազվադեպ էին բարձրանում երկրորդ հարկից վեր: Սա նույնպես համահունչ էր Ուկրաինայում արված դիտարկումներին և հիմնված էր նույն պատճառաբանությամբ: Վերին հարկերում գործունեությունը հայտնաբերելու և դրա աղբյուրները խոցելու համար սենսորների օգտագործումը մնում էր արդիական, բայց, ըստ երևույթին, հետևակային կազմավորումները պարզապես կարիք չունեին ակտիվորեն զբաղեցնել և մաքրել վերին հարկերը: Սակայն բարձրահարկ շենքերը դժվարություններ էին ստեղծում մերձամարտի ընթացքում: Նախ, ստորին հարկերում հակառակորդին խոցելու համար հաճախ պահանջվում էր ավելի մեծ տրամաչափի զինամթերք: Դա պայմանավորված էր նրանով, որ բարձրահարկ շենքեր ունեցող քաղաքի տարածքներում թիրախի խոցման անկյունները սահմանափակվում էին այդ կառույցների տարրերով, ուստի ստորին հարկը խոցելու համար անհրաժեշտ էր հարվածել վերին հարկերին, որպեսզի կառույցների բեկորները իրենց հերթին հարվածեին ստորին հարկերին: Սա մեծացնում էր սեփական հետևակի ուղեկցող վնասն ու բեկորների ընկնելու վտանգը և ստիպում էր նրանց ավելի հեռու մնալ յուրայինների կրակի խոցման գոտուց:

Չնայած ՑԱԽԱԼ-ը ճեղքման սկզբնական փուլերում արագորեն առաջ էր շարժվում, սակայն փլատակներն ու առաջացած ձագարները մի շարք խնդիրներ առաջացրին: Գիշերները և անձրևին տանկի մեխանիկ-վարորդները տեսողության սարքերով չէին կարողանում ճշգրիտ գնահատել ձագարների խորությունը, ինչը հանգեցրեց տանկերի շրջվելուն և, համապատասխանաբար, մի քանի մեքենաների կորստի: Մեկ այլ խնդիր էլ առաջացավ ուղիղ նշանառությամբ կրակը համակարգելու պայմանների բացակայության պատճառով: Հարձակման կամ պաշտպանության ժամանակ կրակի կառավարումը խորհուրդ է տրվում իրականացնել մարտավարական միավորների նշված սահմաններում, գնդակոծման հատվածներում, "յուրային" և "օտար" հայտնի դիրքերի, հենակետերի և կրակակետերի գտնվելու վայրերում: Բազմաթիվ մոբիլիզացված պահեստազորայինների ընդգրկումը խառը մասնագիտական և զորակոչային զորքերի կազմում նույնպես դժվար լուծվող խնդիր էր: Չնայած իսրայելցի բոլոր պահեստազորայիններն ունեին, որպես նորակոչիկներ, ծառայության անցնելու լիարժեք ռազմական փորձ, առնվազն, նրանցից շատերը մի քանի տարի լուրջ պատրաստություն չէին անցել: Արդյունքում, պահեստազորայիններից շատերը չունեին անհրաժեշտ հմտություններ և ինչ-որ չափով գործում էին հնացած դոկտրինի համաձայն, ինչը խոչընդոտում էր կրակի և զորքերի տեղաշարժի համակարգման սկզբունքների ընդհանուր ընկալմանը:

Տարածքի հատուկ պայմանները բարդացրեցին այս խնդիրները: Գազա քաղաքում բնակչության բարձր խտությունը և խիտ քաղաքային կառուցապատումը ստեղծել էր այնպիսի քաղաքային միջավայր, որը բնութագրվում էր փողոցների փոքր լայնությամբ և անկանոն ձևերի բարձրահարկ շենքերով: Բացի այդ, մարտական գործողությունների ընթացքում տեղանքը ավերակների վերածվելով աստիճանական վերափոխել և ստեղծել էր մարդու աչքին անսովոր, նեղ ու բարդ տեսողական միջավայրի: Անհավասարաչափության և փլատակների ծայրահեղ աստիճանը միանգամայն հաղթահարելի էր տեղանքը վերևից քարտեզագրելիս, բայց անեծք

դարձավ ցամաքային կազմավորումների համար՝ խոչընդոտելով հակառակորդի հենակետերի և թիրախների ճշգրիտ որոշմանն ու նշմանը: Թիրախները հայտնաբերելիս ցամաքային ստորաբաժանումները դժվարանում էին նկարագրել դրանք, ինչը հանգեցնում էր սխալ նշանացուցմանը: Զորքերը, որոնք վարժված էին թշնամու նկատմամբ միմյանց ուղղորդմանը՝ օգտագործելով շենքերի պատուհաններն ու հարկերը որպես կողմնորոշիչներ, դժվարանում էին ավերված շենքերի գտնվելու վայրի մասին արագորեն միմյանց տեղեկատվություն փոխանցել: Քաղաքային կառուցապատման պայմաններում այլ մարտական գործողությունների հետ հակադրությունը, որոնք իրականացնում էր ՑԱԽԱԼ-ը, այնքան մեծ էր, որ հենց ՑԱԽԱԼ-ի փորձն ուսումնասիրողներն այն առանձնացրին որպես հատուկ կատեգորիա՝ «մարտական գործողություններն ավերված քաղաքային կառույցներում» անվանումով: Հարկ է նշել նաև, որ կառուցապատված քաղաքի ոչնչացումը հիմնականում ՑԱԽԱԼ-ի ավիացիայի և հրետանու հարվածների ազդեցության արդյունքն էր: Վեջիվորջո, այն դարձավ հարձակման միջանցքների հետագա պլանավորման և նշանակման գործոններից մեկը:

Խնդիրները, որոնց բախվեցին ՑԱԽԱԼ-ի զինծառայողները, ներառում են յուրային ուժերի և միջոցների ոչ միտումնավոր ոչնչացումը և մարտի ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարները: Դրանք բոլորը տեղի են ունեցել երեք հիմնական պատճառներով: Առաջին թերությունը, որը ամենահեշտն էր վերացնել, լրացուցիչ հրաձգային սպառազինությունն օգտագործելու անկարողությունն էր և մերձամարտի պարագայում դրա կրակային խոցման ներուժի չհասկանալը: Միջադեպերի մեղավորներն առավել հաճախ հանդիսացել են M203 ենթափողային նռնականետերը, որոնց կիրառմանը զինծառայողները վարժեցվել էին, սակայն բավարար փորձ ձեռք չէին բերել՝ մի քանի զինվորներ բեկորային վնասվածքներ ստացան շատ մոտ հեռավորության վրա թիրախները խոցելիս: Մեկ այլ խնդիր էր թևերի միջակայքում «յուրայինների» չնախատեսված բեկորային խոցումը, որն առաջացել էր այն պատճառով, երբ զինամթերքը ճեղքելով շենքի պատը հարվածել էր միջանցքում մանևրող հարակից ռազմական կազմավորմանը: Հարկ է նշել, որ զրահատեխնիկայի և հետևակի միջև կապը, որը ՑԱԽԱԼ-ում սովորաբար իրականացվում էր ռադիոկապի միջոցով, հույժ կարևոր էր կրակի ուղղությունը հաստատելու համար: Մեթոդները, ինչպիսիք են տանկերի կողամասում տեղադրված հեռախոսների օգտագործումը՝ ներսում գտնվող անձնակազմի հետ հաղորդակցվելու համար, վտանգավոր էր, քանզի իսրայելական զրահատեխնիկայի վրա տեղադրված էին ակտիվ պաշտպանության համալիրները (ԱՊՀ):

Յուրային ուժերի և միջոցների ոչ միտումնավոր խոցման և դժբախտ պատահարների երկրորդ պատճառը, որն շատ ավելի բարդ էր վերացնել, դժվարություններն էին հեռավորությունը որոշելու և, համապատասխանաբար, փոխադարձ պատասխանատվության գոտում համաձայնեցումների կատարումը, երբ ռազմական կազմավորումները հարևան հարձակողական միջանցքներով էին շարժվում: Դա առավել ցայտուն էր դրսևորվում, երբ ստորաբաժանումները շեղանկյունով էին նայում շենքերի շարքի երկայնքով: Քանի որ ոչնչացման արդյունքում շենքերը տեսողականորեն միաձուլվում էին, և ազդեցությունն ավելի ցայտուն էր դառնում հեռավորության վրա կամ գիշերը, հարևան ռազմական կազմավորման մանևրելու միջանցքում գտնվող շենքում ընթացող գործողությունները հաճախ դիտարկվում էին, որպես թշնամու մարտական խմբերի կողմից հարձակման նախապատրաստություն: Ազդեցությունը նվազեցվեց, բայց ամբողջությամբ չվերացվեց, երբ շարունակական սահմանների

փոխարեն ռազմական կազմավորումների մանևրելու համար միջանցքների միջև ստեղծվեցին ռեզերվներ, որոնց շնորհիվ երկու հարևան կազմավորումներ կարող էին ազատորեն խոցել թիրախները միջանկյալ տարածքում, որը ձևավորվում էր երթևեկության համար չօգտագործվող փողոցների և շարքերի երկայնքով: Բացի այդ, շինությունները տարբերելու և օպտիկական պատրանքները հաղթահարելու համար օգնեց հեռաչափերի կիրառումը:

Յուրային ուժերի և միջոցների ոչ միտումնավոր խոցման երրորդ պատճառը կապված էր «յուրային» և «օտար» ճանաչման հետ: Մի շարք դեպքերում ՅԱԽԱԼ-ի զինծառայողները, ովքեր շարժվում էին որպես մոտոհետևակայիններ, շենքերը զննելու կամ գործողությունները համակարգելու համար լքում էին փոխադրամիջոցները և վազելով մոտենում փոխգործակցող ստորաբաժանումների մեքենաներին: Այն դեպքերում, երբ նրանք անսպասելի վայրերում հայտնվում էին հետախուզական ապահովման միջերեսում, ապա նրանց, որպես կանոն, ճանաչում էր որպես «օտար», և կրակ էին բացում: Սա պրոբլեմային խնդիր էր հատկապես ԱԹՍ-ների օպերատորների համար, քանզի, չնայած, ջերմային պատկերիչը թույլ էր տալիս ճշգրիտ ընդգծել անձնակազմը տեղանքի ֆոնին, այնուամենայինիվ թույլ էր համազգեստի և հանդերձանքի տեսողական ճանաչումը: Տարբերակման խնդիրը սրվել է նրանով, որ ՅԱԽԱԼ-ի պահեստազորայինները օգտագործում էին անհատական պաշտպանական միջոցներ և դաշտային համազգեստ, որոնք ձեռք էին բերվել մասնավոր կերպով և չէին համապատասխանում ՅԱԽԱԼ-ի կանոնավոր կազմավորումներին, ինչը, ի վերջո, նվազեցնում էր դրանց տեսողական միատարրությունը: ՀԱՄԱՍ-ի զինյալների համար միասնական դաշտային համազգեստի բացակայությունը նույնպես դժվարացնում էր թիրախների ճշգրիտ ճանաչումը: Քաղաքացիական անձանց շրջանում ՀԱՄԱՍ-ի զինյալների ճանաչման հետ կապված խնդիրները դիտարկվում են ստորև՝ թիրախավորման և կրակի վարման համատեքստում:

Իսկ ՀԱՄԱՍ-ի մարտավարությունը զարգանում էր երեք փուլով : Գործողության սկզբում ՀԱՄԱՍ-ը, ըստ երևույթին, նախատեսում էր կառուցել իր պաշտպանությունը քաղաքի հիմնական տրանսպորտային հանգույցների շուրջ, որոնք տեղակայված էին ՅԱԽԱԼ-ի հարձակման ենթադրյալ ուղղությամբ: Դրանք իրենցից ներկայացնում էին հենակետեր, որտեղից հնարավոր էր դիտել դիրքերը և տեսողական հսկողություն սահմանել ՅԱԽԱԼ-ի ռազմական կազմավորումների նկատմամբ տվյալ ուղղությամբ, ինչպես նաև համակարգել ՀԱՄԱՍ-ի փոքր խմբերի տեղաշարժը, որոնք պետք է գրոհեին ՅԱԽԱԼ-ի ռազմական կազմավորումները հարձակման թևերի դարաններից: Այնուամենայնիվ, այս ծրագրի իրականացումը ձախողվեց ՅԱԽԱԼ-ի գլխավոր հարձակման անսպասելի ուղղության պատճառով՝ այն բանից հետո, երբ նրանք նախատեսված դարանակալման վայրերից շատերին մոտեցան տարբեր կողմերից, այլ ոչ թե մեկ հարձակման գծով շարժվելով: ՀԱՄԱՍ-ն իր հերթին գլխավոր շենքերն ու հենակետերը պաշտպանելու համար ձեռնարկեց հարձակումներ և մարտեր: Այսպիսով, մարտական գործողություններն անցան երկրորդ փուլ՝ կոնկրետ խաչմերուկների և լավ տեսադաշտով դիրքերի համար պայքարից մինչև շենքերի համալիրների համար պայքար, որտեղ ՅԱԽԱԼ-ը կենտրոնացրել էր իր ուժերն ու միջոցները հարձակումներ իրականացնելու համար: ՀԱՄԱՍ-ի մարտավարության զարգացման երրորդ փուլը տեղի ունեցավ մեկ շաբաթ տևած նոյեմբերյան զինադադարից հետո, երբ ակտիվորեն իրականացվեցին փոքր, ցրված խմբերի գրոհները՝ հարձակվելով հիմնական ուժերից մեկուսացված ՅԱԽԱԼ-ի կազմավորումների վրա: Քանի որ ավելի մեծ բախումները և ՅԱԽԱԼ-ի կրակային

հզորությունը մեծ կորուստներ էր պատճառում ՀԱՄԱՍ-ին, նա անցավ ՑԱԽԱԼ-ի ավելի փոքր ստորաբաժանումների՝ պարեկների վրա հարձակման մարտավարությունը: ՀԱՄԱՍ-ի տարբեր կազմավորումների շրջանում այսպիսի միատեսակ հարմարվողականությունը վկայում է ՑԱԽԱԼ-ի գործողությունների սկզբնական փուլում տեղեկատվություն փոխանցելու ոչ լրիվ կարողության մասին, որին, ենթադրաբար, չի հաջողվել ամբողջությամբ ոչնչացնել ՀԱՄԱՍ-ի զորքերի կառավարման համակարգը: Այս հարմարեցումը համահունչ էր ՀԱՄԱՍ-ի ռազմավարական նպատակին՝ պահպանել զինված ներկայությունը Գազայում և դրանով իսկ պահպանել վարչական վերահսկողությունը՝ չնայած զգալի մարտական կորուստներին:

ՀԱՄԱՍ-ի ռազմական կազմավորումների վերատեղակայումը դժվարացնելու համար զորքերի մանևրի և կրակային աջակցության օգտագործման հետ մեկտեղ ՑԱԽԱԼ-ը բախվեց ոչ թե հակատանկային դարաններին, այլ ավելի շուտ եզակի անհանգստացնող գործողություններին: Սակայն, երբ ՑԱԽԱԼ-ը շարժվեց դեպի քաղաքային կառուցապատման խորքերը, ՀԱՄԱՍ-ի զինյալները սկսեցին ստորգետնյա կառույցների ցանցից դուս գալ դեպի ավերված շինություններ և ձեռքի հակատանկային նռնականետերից (ՁՀՆ) ու դիպուկահար հրացաններից կրակ վարել ՑԱԽԱԼ-ի տեխնիկայի ուղղությամբ: Մի շարք դեպքերում ծանր սպառազինության նմուշները մարտի մեջ էին մտնում անմիջապես թունելներից, որոնց մուտքերը հողով քողարկված էին: Այլ դեպքերում ՀԱՄԱՍ-ի զինված կազմավորումների անդամները տեղաշարժվում էին քաղաքացիական հագուստով առանց զենքերի, իսկ հետո թաքստոցներից հանելով սպառազինությունը կիրառում էին նախապես պատրաստված դարաններից: ՀԱՄԱՍ-ի զինապահեստները լայնորեն տարածված էին քաղաքի գրեթե բոլոր շրջաններում: ՑԱԽԱԼ-ի տվյալներով Գազա քաղաքում շինությունների մոտ մեկ երրորդը զենք է պարունակել: Հարձակումներից հետո գրոհային խմբերը կրկին թաքնվում էին ստորգետնյա դիրքերում: ՀԱՄԱՍ-ի այս գործողությունների համակարգումը, ըստ երևույթին, կախված էր դիտորդներից, որոնք հետևում էին ՑԱԽԱԼ-ի դիրքերին, Այնուհետև ստացված տեղեկատվությունը փոխանցելու համար օգտագործում էին լարային հաղորդակցությունը կամ սուրհանդակներին: Տեղեկատվության փոխանցումը կարող էր իրականացվել նաև սոցիալական ցանցերի միջոցով, որտեղ քաղաքացիական անձինք քննարկում էին իրենց շուրջ տեղի ունեցող իրադարձությունները և դրանով իսկ զգալիորեն բարձրացնում ՀԱՄԱՍ-ի մարտական խմբերի իրավիճակային իրազեկությունը:

ՀՏԿՀ-ների էպիզոդիկ կիրառումը և ՁՀՆ-ների ակտիվ օգտագործումը, որոնք հաճախ գործադրվում էին ՑԱԽԱԼ-ի զրահատեխնիկայից 30-50 մետր հեռավորության վրա, խնդիրներ էին ստեղծում մարտական մեքենաների ակտիվ պաշտպանության համալիրների (ԱՊՀ) համար: Տեխնիկայի հաջող խոցումը տեղի էր ունենում այն դեպքերում, երբ ԱՊՀ -ն միացված չէր, տվիչի և թշնամու հրթիռի միջև ուղղակի տեսանելիություն չկար, կամ էլ սպառվել էր պաշտպանական զինամթերքի լրակազմը: Այնուամենայնիվ, չնայած ՀԱՄԱՍ-ը կարծում էր, որ ԱՊՀ-ն կարող է ոչնչացվել մերձամարտում, խնդիրը լուծվեց ծրագրային ապահովման թարմացման միջոցով: Այսպես, շատ դեպքերում, ԱՊՀ-ն արդյունավետ էր, չնայած զրահատեխնիկայի և յուրային հետևակի միջև հեռավորության պահպանմանը, որն անհրաժեշտ էր ԱՊՀ-ի անվտանգ օգտագործման համար, ՀԱՄԱՍ-ի մարտիկներին նույնպես հնարավորություն էր տալիս ավելի շատ մոտենալ որոշ մեքենաներին: Այնուամենայնիվ, պարզվել է, որ սերտ համագործակցությամբ զույգ մեքենաների աշխատանքը նպաստում է նրանց գոյատևման մակարդակի բարձրացմանը, քանի որ

ԱՊՀ-ները հաճախ համընկնում էին միմյանց հետ և դրանով իսկ հավաքականորեն ավելացնում մարտական լրակազմը:

Հարկ է կանգ առնել նաև 2023 թվականի հոկտեմբերի 7-ից Գազայում զոհերի թվի վրա, քանի որ այս ցուցանիշն արտացոլում է ռազմական գործողությունների ինտենսիվությունը: Ինչ վերաբերում է անհատական մարտական բախումներին, ՀԱՄԱՍ-ը հազվադեպ էր կենտրոնացնում ուժերը դասակի մակարդակից բարձր: Այնուամենայնիվ, քանի որ քաղաքաշինությունն ինքնին պայմաններ էր ստեղծում փոքր ստորաբաժանումների միջև բարձր ինտենսիվության մարտական գործողությունների համար, նույնիսկ այդպիսի մարտակարգը հանգեցրեց զգալի մարտական կորուստների: Գազայում ցամաքային գործողության մեկնարկից ի վեր մինչ այս հոդվածը գրելը, մարտերում զոհվել էին ՑԱԽԱԼ-ի 287 զինծառայողներ, ևս 1798-ը վիրավորվել էին, որոնցից 357-ը դասակարգվեցին որպես ծանր վիրավորներ: Այսպիսով, մինչ այժմ ՑԱԽԱԼ-ը ավելի շատ զոհեր էր տվել, քան Մեծ Բրիտանիան 1982 թվականին Ֆոլկլենդյան կղզիները Արգենտինայից հետ վերցնելու արշավի ընթացքում կամ 2003 թվականից ի վեր Իրաքում Բրիտանական ամբողջ արշավի ընթացքում: ՀԱՄԱՍ-ը կորուստների մասին տվյալներ չի հրապարակել, բայց ՑԱԽԱԼ-ի գնահատմամբ՝ մինչև 2024 թվականի փետրվարը սպանվել էր ՀԱՄԱՍ-ի զինված կազմավորումների 10,000-12,000 անդամ: Ենթադրվում է, որ խաղաղ բնակչության և Պաղեստինյան ծագմամբ մարտիկների շրջանում զոհերի թիվը գերազանցել է 35,000-ը: Ընդ որում, շատ մարմիններ մնացել են փլատակների տակ, ինչը թույլ չի տալիս վերջնահաշվարկ կատարել: Այդուհանդերձ, այս գնահատականները, թեև խեղաթյուրված են ավիահարվածների և փակ դիրքերից կրակի կիրառման զոհերի չափաբաժինների առումով, սակայն պատկերացում են տալիս մարտական գործողությունների ինտենսիվության մասին:

3. Ինժեներատեխնիկական ապահովում

ՑԱԽԱԼ-ի օպերացիաները սկսեց այն ենթադրությամբ, որ ՀԱՄԱՍ-ը Գազայի հատվածում, առաջխաղացման ենթադրյալ ուղիների երկայնքով, ակտիվորեն ականներ և ինքնաշեն պայթուցիկ սարքեր պետք է տեղադրեր: Այդ պատճառով, իսրայելական զորքերը սկզբում կամ խուսափում էին ճանապարհներից, կամ դրանք օգտագործում էին միայն զրահապատ D9 բուլդոզերների աջակցությամբ մանրակրկիտ ականազերծման աշխատանքներից հետո, ինչը դանդաղեցնում էր հարձակման արագությունը: ՑԱԽԱԼ-ը որոշել էր, որ գործողությունների անհրաժեշտ տեմպն ապահովելու համար յուրաքանչյուր բրիգադին անհրաժեշտ էր 20 միավոր D9, թեև դրանք հատկացվել էին միայն առաջնագծի բրիգադներին: Իրականում դա մեծամասամբ ավելորդություն էր, քանի որ ՀԱՄԱՍ-ը պահանջվող խտությամբ ականապատում չէր իրականացրել, բացի այդ բազմաթիվ տեղադրված ականները գտնվում էին անմիջապես մակերեսին, ուստի դրանք հեշտությամբ հայտնաբերվում և վնասազերծվում էին: Վիճահարույց է այն կարծիքը, որ իբրև թե ավելորդ էին իսրայելական ինժեներա-մարտական կարողությունների բանեցումը, քանզի ՀԱՄԱՍ-ը՝ Գազայի քաղաքի ճանապարհներին ինքնաշեն պայթուցիկ սարքեր չտեղադրելու մասին որոշում էր կայացրել: Այլ կերպ ասած, հնարավոր էր, որ ՑԱԽԱԼ-ի տրամադրության տակ գտնվող մեծ քանակությամբ ականազերծման տեխնիկան ստիպեր ՀԱՄԱՍ-ին առաջնահերթությունը տալ նախապատրաստման այլ ուղղություններին: Քաղաքի մերձակայքը ականապատելու ՀԱՄԱՍ-ի անկարողությունը կարող էր պայմանա-

վորված լինել նաև ժամանակի սղությամբ, օդային հսկողության ինտենսիվությամբ և տեղի քաղաքացիական բնակչության վրա մինչև հոկտեմբերի 7-ը ընկած ժամանակահատվածում քաղաքական ազդեցության պատճառով:

Թեև երթուղիների նախագծումը չէր պահանջում զգալի ինժեներա-տեխնիկական աջակցություն, այնուամենայնիվ ականազերծումը և պայթուցիկ նյութերից տարածքի մաքրումը պահանջում էր ինժեներա-սակրավորային ռազմական կազմավորումների զգալի ջանքեր: Նախ, ՀԱՄԱՍ-ը Գազայի հատվածի շենքերում պայթուցիկ սարքեր էր տեղադրել, որոնք հոդվածը շարադրելու պահին էլ շարունակում էին զոհերի պատճառ դառնալ: Ականապատվել էին նաև ՀԱՄԱՍ-ի թունելների մուտքերը՝ դրանք պաշտպանելու և ՑԱԽԱԼ-ի մուտքը ստորգետնյա ենթակառուցվածքի օբյեկտներ խոչընդոտելու նպատակով: Այսպիսով, հետիոտն ինժեներներն ու սակրավորները դարձան ՑԱԽԱԼ-ի բոլոր համազորային գործողությունների անբաժանելի տարրերը: Պայթյունավտանգ առարկաների (ՊԱԱ) և չպայթած զինամթերքի (ՉԶՄ) որոնմանը և վնասազերծմանը զուգահեռ, սակրավորները նաև կարևոր դերակատարություն ունեին շենքերի և շինությունների պատերին ճեղքեր ստեղծելու գործում, ինչը թույլ էր տալիս ՑԱԽԱԼ-ին անկանխատեսելիորեն շարժվել քաղաքային միջավայրում: Սա նվազեցրեցնում էր առաջ շարժվող հետևակի թակարդներ և դարաններ ընկնելու վտանգը:

Ընդհանուր առմամբ, ինժեներա-տեխնիկական ապահովման համար անհրաժեշտ ինժեներական հմտությունները նոր չեն: Մերձավոր Արևելքում և Աֆղանստանում կոալիցիոն մարտական գործողությունների փորձ ունեցող ցանկացած դիտորդ ծանոթ է դրանց մեծամասնությանը: Սակայն, առանձին փոքր ստորաբաժանումների մակարդակով ինժեներական զորքերը այլ ռազմական կազմավորումներում ներառելու անհրաժեշտությունը շեշտում է համապատասխան պատրաստվածություն ունեցող զինծառայողների զգալի քանակի անհրաժեշտությունը: Սա նաև հարցեր է առաջացնում տարբեր կազմավորումներում ինժեներական զորքերի բաշխման վերաբերյալ՝ միաժամանակ պահպանելով անհրաժեշտության դեպքում նրանց գործողությունները կենտրոնացնելու և ձեռք բերված փորձը ընդհանուր առմամբ ինժեներական զորքերում կիրառելու, ինչպես նաև վերապատրաստման ծրագրերում ճշգրտումներ կատարելու հնարավորությունը: Քաղաքային կառուցապատման պայմաններում այս ամենը համազորային կազմավորումների մարտական գործողությունների համար կենսական նշանակություն ունի: Բացի այդ, ինչպես ցույց տրվելու հաջորդ գլխում, որոշ մարտական գործողությունների ստորգետնյա բնույթը նշանակում էր, որ ինժեներական բարդ առաջադրանքները պետք է իրականացվեին գետնի տակ նույնիսկ ավելի անբարենպաստ պայմաններում:

Նկարագրված մարտական գործողություններում ինժեներա-տեխնիկական ապահովման բարդությունը ազդեց նաև հակառակորդի ստորգետնյա ենթակառուցվածքը հայտնաբերելու համար նոր տվիչների օգտագործման վրա: Դրանց կիրառումը պահանջում էր սերտ համագործակցություն ինժեներական ապահովման ստորաբաժանումների և հետախույզների միջև: Այստեղ ՑԱԽԱԼ-ին օգտակար եղավ պահեստազորայինների փորձը, ովքեր ունեին հմտություններ, որոնք դուրս էին ավանդական ռազմական մասնագիտությունների շրջանակներից: ՀԱՄԱՍ-ի մարտիկների գերեվարումը կամ նրանց թաքստոցների և, համապատասխանաբար, փաստաթղթերի զավթումը պահանջում էր տարածքում արագ տեղաշարժվելու ունակություն, ինչը, իր հերթին, պահանջում էր կետային դիվերսիոն աշխատանքներ և օպերատիվ ինժեներական ապահովում: Ընդհակառակը, երբ գրավված նյութերի

ուսումնասիրությունը կամ գերեվարված զինյալների հարցաքննությունը թույլ էին տալիս որոշել թունելների գտնվելու վայրը, հաճախ անհրաժեշտ էր ինժեներական հետախուզության փորձ՝ ստացված տեղեկատվությունն արագ իրատեսական գործողությունների ծրագրի վերածելու համար: Հետևաբար, փոքր ստորաբաժանումների ինժեներական ապահովման անձնակազմի պատրաստվածության մակարդակը ավելի բարձր էր, քան թեթև ինժեներական ստորաբաժանումների ավանդական ստանդարտները, մինչդեռ ժամանակ էր պահանջվում մարտավարական միավորներում սակրավորների բաշխման համար: Բարդ տեղանքը նաև մարտավարական խնդիրներ էր առաջացնում, երբ ինժեներական սարքավորումները պետք էր արագ տեղափոխել հարձակման բնագծերի միջև: Ջրամատակարարման համակարգի վերանորոգումը սովորաբար իրականացվում էր հատուկ ինժեներական ստորաբաժանումների կողմից, որոնք ներգրավված էին սանիտարական իրավիճակը նորմալացնելու և քաղաքացիական բնակչության կարիքները ապահովելու համար՝ մաքրման հիմնական գործողությունների ավարտից հետո: Որոշ դեպքերում, ՀԱՄԱՍ-ի թունելները ծովային ջրով ողողելու և մարտական գործողությունների ընթացքում ուղղակիորեն ինժեներա-տեխնիկական նոր առաջադրանքներ կատարելու խնդիրը պահանջում էր համապատասխան մասնագետների ներգրավում, ովքեր հայտնվում էին այնպիսի պայմաններում, որոնց նրանք պատրաստ չէին: Այնուամենայնիվ, նման մեթոդները հնարավորություն տվեցին վերացնել մի շարք դժվարություններ:

Թիկունքում ինժեներական աշխատանքների կարևորությունը պարզվեց, որ կարևոր էր: Իսրայելում և Գազայում անձրևային սեզոնները սովորաբար կարճ են, բայց ինտենսիվ, ինչը հանգեցրեց տեղանքի վրա դրանց անհավասար ազդեցությանը: Իսկ դրան հաջորդեց տեղաշարժման հնարավորությունների և սանիտարական բնույթի հումանիտար խնդիրները: Բացի այդ, կլիմայական պայմանները հանգեցրին միջանցքների աստիճանական փոփոխությանը: Հատուկ պայմաններում զորքերի ընդհանուր շարժունակությունը պահպանելու և անհրաժեշտ ինժեներա-տեխնիկական սարքավորումների տեղաշարժը՝ ռոտացիան ապահովելու համար ռազմական կազմավորումները պետք է անընդհատ տեղաշարժվեին Գազայի հատվածում: Հաշվի առնելով կարճ ժամանակահատվածում ինժեներական սարքավորումներ տրամադրելու անհրաժեշտությունը, չնայած դրա չափերին, այն միշտ պետք է մատչելի լիներ այնպիսի ստորաբաժանումների համար, որոնք չունեին այդպիսիք իրենց հաստիքացուցակում: Սա պահանջում էր համապատասխան սարքավորումները նախապես տեղադրել պահանջվող դիրքերում, որի համար անհրաժեշտ էր հետախուզություն և մանրակրկիտ պլանավորում:

4. Ստորգետնյա պատերազմ

Գազայում ՀԱՄԱՍ-ի ստորգետնյա ենթակառուցվածքի չափերը այն դարձրել էր գրեթե եզակի մարտական տարածք: Թեև ոչ այս մասշտաբի, բայց ստորգետնյա տեղաշարժը, որպես մարտեր վարելու տարր, կարելի էր տեսնել Մարիուպոլում, Բախմութում, Մոսուլում և այլ քաղաքներում: Հետևաբար, այս գլխում արված եզրակացությունները, արժեքավոր են այն առումով, որ առավելապես ամրապնդված են կոնկրետ օրինակներով:

ՀԱՄԱՍ-ի պնդմամբ՝ հոկտեմբերի 7-ի հարձակմանը նախորդող տարիներին Գազայի հատվածում կառուցվել էր ավելի քան 500 կմ թունելային ցանց: Սա

պահանջում էր հսկայական քանակությամբ բետոն և երկաթ, էլ չեմ ասում արդյունահանվող հողը հանելու անհրաժեշտության մասին: Անհասկանալի է մնում, թե ինչն է ավելի շատ օգտագործվել շինարարության ընթացքում՝ պարտադրանքը, թե քաղաքացիական բնակչության հետ ակտիվ համագործակցությունը: Այսպես թե այնպես, թունելներն ու դրանց մուտքերը գտնվում էին բնակելի տների, դպրոցների, մզկիթների և հիվանդանոցների տակ:

ՀԱՄԱՍ-ի ստորգետնյա ենթակառուցվածքը պարզապես որպես «թունել» նկարագրելը թերագնահատում կլիներ: Դրանցից մի քանիսը նախատեսված էին որպես թաքնված անցումներ հենակետերի միջև, օրինակ՝ Վադի Գազայի տակ: Մյուսները կառուցվել էին իսրայելական պաշտպանությունը շրջանցելու նպատակով: Երրորդում տեղակայված էին զորանոցներ, թաքստոցներ, զորքերի ղեկավարման կետեր, տվյալների պահեստներ և արտադրական օբյեկտներ: Եթե պարզեցնենք, ապա պետք է ասենք, որ ստորգետնյա ենթակառուցվածքի երկու մակարդակ գոյություն ուներ՝ հրամանատարական և շարքային կազմերի կողմից օգտագործվող թունելներ: Դրանք առանձնացված էին: Հրամանատարության թունելներն ավելի խորն էին, ավելի լավ կառուցված և ունեին ավելի շատ հարմարություններ, ինչը թույլ էր տալիս դրանք օգտագործել ավելի երկար մնալու և մարտական գործողություն-ները ղեկավարելու համար: Թունելները միասնական ցանց չէին: Չնայած որոշ հատվածներ կապված են միմյանց: Շատերը փոքր համակարգեր էին, որոնք միավորված չէին ընդհանուր ստորգետնյա կառուցվածքում: Այդպիսի հատվածա-վորումը սահմանափակում էր յուրաքանչյուր կոնկրետ թունելի շահագործման ներուժը: Թեև գրավվել էր առնվազն մեկ խոշոր տվյալների կենտրոն, ստորգետնյա զորքերի ղեկավարման հանգույցների մեծ մասը շատ փոքր էր և բաղկացած էր միայն նոութբուքերից, որոնք միացված էին ինտերնետին կամ ներքին ցանցին: Դրանք կարելի էր գտնել թունելների ամբողջ ցանցում:

Մինչ ներկայիս հակամարտության սկսելը հայտնի էր, որ ՀԱՄԱՍ-ը զբաղվում է թունելների և ստորգետնյա ենթակառուցվածքների կառուցմամբ: Սակայն, նույնիսկ ունենալով հետախուզական ապահովման հզոր սարքավորումներ, ՑԱԽԱԼ-ը ստոր-գետնյա հաղորդակցությունների ճշգրիտ քարտեզ կազմելու հնարավորություն չուներ: Չնայած ՑԱԽԱԼ-ի տարբեր կազմավորումներ վարժանքներ էին անցկացնում՝ նվիրված Գազայում հիպոթետիկ գործողություններին, ՀԱՄԱՍ-ը տեղանքը շատ ավելի լավ գիտեր, քան ՑԱԽԱԼ-ը, և դա հատկապես վերաբերում էր ստորգետնյա միջավայրին: Թունելները նաև կենտրոնական տեղ էին զբաղեցրել մարտական գործողություններ վարելու ՀԱՄԱՍ-ի մոտեցմանը՝ թույլ տալով նրան ապաստան գտնել այն շրջաններում, որոնք նախկինում մաքրվել էին ՑԱԽԱԼ-ի կողմից:

Օպերացիայի սկզբում ՑԱԽԱԼ-ը պատկերացնում էր, որ հարձակողական գործողությունները մակերևույթի վրա և գետնի տակ իրականացվելու են հերթով: Սկզբում գրավվելու են տարածքը, այնուհետև խուզարկության միջոցով հայտնա-բերելով թունելները՝ ոչնչացնելու են դրանք: Ռազմական գործողությունների զարգացման հետ մեկտեղ ակնհայտ դարձավ, որ այդպիսի հաջորդականությունը թույլ կտա ՀԱՄԱՍ-ին երկար ժամանակ շարունակել դարանակալումները, այնուհետև նրանք կանցնեն ստորգետնյա օբյեկտների բազմամակարդակ պաշտպա-նությանը: Ստորգետնյա ենթակառուցվածքը նույնպես չէր կարող ապահով շրջանց-վել: Հետևաբար, մակերևույթի և գետնի տակ մարտական գործողությունները պետք է իրականացվեին միաժամանակ, ինչը ուժերի մանևրելու սխեմաների ընտրության հարցում ՀԱՄԱՍ-ի առջև խնդիրներ էր առաջացնելու: Թունելներ մուտք գործելու

համար անհրաժեշտ էին ինժեներական ապահովման միջոցներ, իսկ դրանց մուտքերը ականազերծելու համար՝ բարձր մասնագիտացված սարքավորումներ և դրա կիրառման բարդ տեխնիկա, հետևաբար՝ անձնակազմ:

ՑԱԽԱԼ-ը պարզեց, որ ստորգետնյա մարտական գործողությունները լարված են լինելու անձնակազմի համար և պահանջելու են տարբեր տեխնիկական միջոցների կիրառում: Այն փաստը, որ թունելի յուրաքանչյուր շրջադարձ կարող էր հանգեցնել հակառակորդի հետ չափազանց սերտ բախմանը կամ ինքնաշեն պայթուցիկ սարքի հայտնաբերմանը, սրություն էր հաղորդում անձնակազմի հոգեբանական ճնշմանը, ինչը բացասաբար էր անդրադառնում նրա բարոյական վիճակի վրա: Թեև սերտ բախման վտանգ էր առաջանում նաև քաղաքային կառուցապատման պայմաններում՝ սովորական մարտական գործողությունների ընթացքում, սակայն թունելային պայմաններում հնարավոր չէր անսպասելի հարձակում իրականացնել կամ շրջանցել հակառակորդին, ինչը միայն սրում էր իրավիճակը: Թունելները պետք էր մաքրել նպատակային, և հակառակորդը կարող էր ձեռնարկել մի շարք դանդաղեցնող կամ բթացնող գործողություններ, որոնցից հնարավոր չէր խուսափել:

Մարտական գործողությունների սկզբում ՑԱԽԱԼ-ը հատուկ ուշադրություն էր դարձնում թունելների մուտքերի հայտնաբերմանը, վերահսկմանը և զմրսմանը կամ ոչնչացմանը: Որոշ դեպքերում թունելները կարող էին ոչնչացվել օդից, ինչը նախադեպ հանդիսացավ պատերազմի սկզբում ծանր ավիացիոն խոցման միջոցների լայն կիրառման համար: Շատ դեպքերում, սակայն, դա հնարավոր չէր իրագործել մի շարք պատճառներով: Չնայած թունելների ենթակառուցվածքը միանշանակ համարվում է ռազմական օբյեկտ, նունությամբ չէր կարելի վերաբերվել ցամաքային այլ ենթակառուցվածքներին, քանզի, հավանաբար, այնտեղ կարող էին գտնվել պատանդներ, այդ իսկ պաճառով հարձակումը դանդաղեց: Բացի այդ, ստորգետնյա թունելների փլուզումը կարող էր սպառնալ մակերեսին գտնվող քաղաքացիական շենքերի կառուցվածքային կայունությանը: Ինչպես ՀԱՄԱՍ-ի և առևանգված պատանդների վերաբերյալ լրացուցիչ հետախուզական տվյալներ ստանալու, այնպես էլ քաղաքացիական ենթակառուցվածքների օբյեկտները ուղղակիորեն ՀԱՄԱՍ–ին վերագրելու և ռազմական ակտիվությունը փաստաթղթավորելու համար անհրաժեշտ էր կարևոր տեղեկություններ հավաքել: Այս գործոններն ազդեցին ստորգետնյա մարտական գործողությունների դանդաղ և կանխամտածված տեմպի վրա:

ՀԱՄԱՍ-ի ստորգետնյա ենթակառուցվածքի լայնածավալ նպատակային մաքրումն ապահովելու համար ՑԱԽԱԼ-ը ավելի ու ավելի հաճախ էր միավորում սովորական զորքերի և հատուկ գործողությունների ուժերի ռազմական կազմավորումները: Հատուկ գործողությունների ուժերը հիմնականում բաղկացած էին «Շայարեթ-13» (13-րդ նավատորմ, Իսրայելի ռազմածովային հատուկ նշանակության ուժեր) և «Յահալոմ» (հատուկ նշանակության ուժերի ինժեներա-սակրավորային կազմավորում) զինծառայողներից, որոնք բրիգադի մակարդակով տրվել էին այլ ռազմական կազմավորումների: Ստորգետնյա օբյեկտների մաքրումը պետք է իրականացվեր դանդաղ և կանխամտածված: Կային նաև սահմանափակումներ. թե որքանով այն կարող էր կամ անհրաժեշտ էր զուգակցել մակերևույթի առաջխաղացման հետ՝ հաշվի առնելով, որ անհնար է, բացառությամբ թունելների մուտքերի, ապահովել արդյունավետ փոխադարձ մարտական աջակցություն կամ ընդհանուր իրավիճակային իրազեկում: Այնուամենայնիվ, մակերևույթի և ստորգետնյա հարձակողական գործողությունների համակարգումը ՀԱՄԱՍ-ին երկընտրանքի առաջ դրեց՝ սահմանափակելով նրա տեղաշարժի հնարավորությունները և թույլ չտալով

թունելներն օգտագործել իր հայեցողությամբ: Ստորգետնյա պայմաններում կարող էին օգտագործվել նաև հատուկ օպերացիաների ուժերը, բայց դրա համար անհրաժեշտ էր կառուցել աշխատանքային հարաբերություններ սովորական զորքերի հետ, որոնք պետք է ներառեին հետախուզական տվյալների և տեղեկատվության արագ փոխանակում, ինչը միշտ չէ, որ բնական էր հատուկ օպերացիաների ուժերի համար և պահանջում էր լրացուցիչ մոտիվացիա: Թեև ռոբոտներն ու ծառայողական շները օգնում էին թունելներում ուղիներ հարթել, հաշվի առնելով դռների, աստիճանների և այլ խոչընդոտների քանակը, որոնք պետք է հաղթահարվեին, այնուամենայնիվ ականազերծման և պայթուցիկ իրերի վնասազերծման աշխատանքների մեծ մասը դեռ պետք է կատարեին զինծառայողները:

Մակերևույթին և գետնի տակ միաժամանակյա առաջխաղացման խնդիրներից մեկն էլ այն էր, որ թունելների հետագծումը չէր համընկնում մակերևույթին գտնվող ռազմական կազմավորումների հարձակման գծի և նրանց միջև հաստատված սահմանազատիչ գծերին: Հաշվի առնելով կապը պահպանելու համար թունելով շարժվող ստորաբաժանումների հետևում վերահաղորդիչ ունենալու անհրաժեշտությունը, ստորգետնյա ուժերի և միջոցների կառավարումը պետք է իրականացներ այն բրիգադը, որին տրվել էին այդ ստորաբաժանումները: Այդուհանդերձ, նրանք հաճախ հայտնվում էին սահմանազատիչ գծերից անդին՝ հարևանների գոտում: Դա հնարավոր էր վերացնել ազդարարման միջոցով, բայց ցամաքային ստորաբաժանումների համար լրացուցիչ անհրաժեշտություն էր առաջանում հաշվի առնել, թե կրակային խոցման ինչ միջոցներ կիրառել և ինչ երթուղիներ պետք է օգտագործեն ծանր մեքենաները:

5. Կրակային աջակցություն

Գազայում մարտական առաջադրանքների միաժամանակյա կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված կրակի վարման համակարգումը բարդանում էր միանգամից մի քանի ուղղություններով: Նախ, ՑԱԽԱԼ-ն ուներ հատկապես կարևոր թիրախների ցանկ, որոնց ոչնչացումը կատարվում էր հակամարտության հենց սկզբից: Ցուցակը կազմվել էր հետախուզական տվյալների բոլոր հնարավոր աղբյուրների ուսումնասիրության հիման վրա և ներառել էր ինչպես թիրախներ անձնակազմի շրջանում, այնպես էլ մի շարք կառույցներ, որոնցից մի քանիսը գտնվում էին գետնի տակ: Հետախուզության միջոցով հայտնաբերված թիրախներին ճշգրիտ հարվածներ հասցնելու համար պետք էր դիտարկման միջոցներով «եզերապատել»: «Եզերապատումը» (framing) իսրայելական դոկտրինի տերմին է, որը նշանակում էր, որ ոչնչացման ենթակա թիրախը հաստատված է և անփոփոխ, քանի դեռ այն չի ոչնչացվել: Այդպիսի նպատակային լիկվիդացումը նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատ հիմնականում մնացել էր անփոփոխ, սակայն էական բարդությունը հանդիսացավ պատերազմի ընթացքում կիրառվող հարվածների այլ ձևերի հետ դրա հարաբերակցումն ու համաձայնեցումը:

Լիկվիդացման հետ մեկտեղ, ըստ նշանացուցման տվյալների, ՑԱԽԱԼ-ը թիրախներին հարվածներ էր հասցնում դիտարկման ընթացքում հայտնաբերված ապաքողարկող նշանների հիման վրա: Հակամարտության սկզբում այդպիսի հարվածների վառ օրինակ էին հրթիռների արձակման կայանքներին հարվածելը: Հետագայում ԱԹՍ-ների կամ դիտարկման սովորական միջոցներով զինյալների խմբերի հայտնաբերումը նույնպես կարող էր հանգեցնել հարվածների: Կարևոր է նշել, քանի որ

ՑԱԽԱԼ-ը չէր կարող ընտրել այդպիսի «կալանում-հարված» հասցնելու ժամանակը և վայրը, հաճախ դրանք հասցվում էին այն վայրերում, որտեղ բավարար հետախուզական տվյալներ չկային, առանց մանրամասն գնահատելու հնարավոր հարակից վնասները: Ինչպես Մոսուլում օպերատիվ կրակային խոցումը որոշ դեպքերում հանգեցրեց մեծ թվով քաղաքացիական անձանց մահվան, քանի որ անհնար էր որոշել նրանց ներկայությունը դրա համար հատկացված ժամանակահատվածում, այնպես էլ խոշոր շինություններին ՑԱԽԱԼ-ի օպերատիվ կրակային հարվածները հանգեցրեցին միանգամից մի քանի սերունդների քաղաքացիական անձանց ընտանիքների մահվան: ԶԼՄ-ներում բազմաթիվ շահարկումներ եղան այդպիսի թիրախներին հարվածներ հասցնելու ցանկեր ստեղծելու համար ՑԱԽԱԼ-ի կողմից արհեստական ինտելեկտի տեխնոլոգիաների կիրառման թեմայի շուրջ: Ավելի ճիշտ կլիներ ասել, որ ՑԱԽԱԼ-ի նշանացուցման խմբերը օգտագործում էին այնպիսի ծրագրային գործիքներ, որոնք օգնում էին շատ ավելի արագ միավորել մեծ քանակությամբ տվյալներ և որոշել առավել լայնածավալ հարվածների համար կրակային առաջադրանքների ցանկը: Այսպիսի պայմաններում թիրախների ցուցակի ձևավորման գործընթացը հաճախ առաջ էր անցնում դրանց խոցման պլանավորման գործընթացից, ինչը խոչընդոտում էր դրա իրականացմանը: Այնուամենայնիվ, հարված հասցնելու որոշումը, ամեն դեպքում, կայացնում էր մարդը, և հենց նա էր պատասխանատու այն բանի համար, թե ինչ նպատակով է կիրառվում ապարատային ապահովման հավաքածուն: Հետևաբար, սխալները տեղի էին ունենում ոչ թե ծրագրային ապահովման մեղքով, որը որոշում կայացնողներին տրամադրում էր բոլոր անհրաժեշտ տեղեկությունները՝ իրենց եզրակացությունները ստուգելու համար, այլ հաճախ այն պատճառով, որ զենքի համակարգերի օպերատորները բավարար ժամանակ չէին տրամադրում ծրագրի առաջարկությունները ստուգելու համար:

Երրորդ տեսակի հարվածներն այն հարվածներն էին, որոնք հասցվում էին ցամաքային զորքերի պահանջով: ՑԱԽԱԼ-ում կրակային խոցման միջոցները, ներառյալ ավիահարվածները, բաշխվել էին ըստ բրիգադների, իսկ բրիգադի շտաբը իր հերթին ռազմական կազմավորումների հետ, մանևրի սխեմայով, համաձայնեցնելով գործողությունները պատասխանատու էր այդ միջոցների կիրառման կամ թիրախների որոշման համար այն պահին, երբ հարվածը կարող էր հասցվել ի պատասխան սպառնալիքի: Չնայած իրենց մտադրությունները փոխանցելու համար բանակային կազմավորումների հրամանատարները կարող էին կապ հաստատել օդաչուների հետ, այնուամենայնիվ, տեխնիկական համակարգումը, ներառյալ օդային հարվածները, իրականացվում էին բրիգադի հրամանատարական կետից: ՑԱԽԱԼ-ը հարվածների կառավարման համար չէր օգտագործում առաջադեմ ավիանշանառուներին: Չնայած դրան, ՑԱԽԱԼ-ին հաջողվեց ծայրահեղ մոտ հեռավորությունից (մինչև 200մ) հարվածներ հասցնել տեղաշարժվող հառակորդի ստորաբաժանումներին՝ նվազագույն վնաս պատճառելով յուրային ուժերին ու միջոցներին:

Որպես երեք տեսակի հարվածների հետևանք մարտական տարածքի ցանկացած կոնկրետ հատվածում տեղի էր ունենում նշանառման երեք գործընթաց: Դրանցից յուրաքանչյուրը ներառում էր միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) և պատերազմի օրենքների տարբեր նորմեր: «Կալանում-հարված»-ը կամ հետախուզական տվյալների հիման վրա ՀԱՄԱՍ-ի և «Պաղեստինյան Իսլամական ջիհադի» զինված կազմավորումների մասնակիցների նպատակային ոչնչացումը գտնվում էր ամենախիստ վերահսկողության տակ: ՑԱԽԱԼ-ն մինչև ոչնչացման պահը աշխատում էր թիրախի ճիշտ ճանաչման, այնուհետև այն շարունակական ուղեկցման ուղղու-

թյամբ: Այդ թիրախները, որպես կանոն, օգտագործելով պաշտպանական կառույցները գործադրում էին բոլոր ջանքերը որպեսզի փոքրացնեն ՑԱԽԱԼ-ի հնարավորությունները դրանց ոչնչացման հարցում:

ՑԱԽԱԼ-ը նույնպես ստիպված էր բախվել «կարուսելի դռներ» խնդրին: Այսպես, ՀԱՄԱՍ-ի զինված կազմավորումների լիիրավ անդամները կարող էին միանշանակ դիտվել որպես կոմբատանտներ[1]: Սակայն հոկտեմբերի 7-ին և Իսրայելի հետագա ցամաքային գործողությունների ժամանակ Գազայում շատ էին տեղի քաղաքացիական անձինք, ովքեր մասնակցում էին ՑԱԽԱԼ-ի դեմ ռազմական գործողություններին: Այս գործողությունները տատանվում էին զենք վերցնելուց և մարտական գործողություններին մասնակցելուց մինչև թաքնված հանդերձանք փնտրելը կամ ՀԱՄԱՍ-ին աջակցելու համար ռազմադաշտի վերաբերյալ տվյալներ հաղորդելը: Եվ չնայած այդ անձինք մեքենայորեն դառնում էին կոմբատանտներ, այնուամենայնիվ, նրանց գործունեության դադարումից հետո կարգավիճակի որոշումը (եթե չէր հաստատվում, որ նրանք ՀԱՄԱՍ-ի անդամ են) իրավաբանորեն բարդնում էր: Դժվար էր տարբերել մարտական գործողությունների պատահական մասնակիցին և նրանց, ովքեր մշտապես աջակցում էին ՀԱՄԱՍ-ին այնպիսի մեթոդներով, որոնք այնուհետև հետևողականորեն կիրառելի կլինեին: Օրինակ՝ ռազմական խոհարարը պատերազմում օրինական թիրախ է, իսկ ՀԱՄԱՍ-ին սնունդ մատակարարող քաղաքացիական անձը կարող էր հանդիսանալ քաղաքացիական ծառայություններ մատուցող, և, հետևաբար, օրինական թիրախ չէ: Սակայն կա սահման, որից այն կողմ այդ նույն մարդը դառնում է կոմբատանտ, երբ զինված կազմավորումներին ապահովելու համար ակտիվորեն շեղվում է քաղաքացիական նորմալ վարքից: Թե որտեղ է ճշգրիտ անցնում այդ սահմանը, վիճելի հարց է, և լայնածավալ պատերազմում ժամանակի սղության պայմաններում կոմբատանտների և ոչ կոմբատանտների միջև ճշգրիտ տարբերակման պայմանները կարող են փոխվել: Դա կախված է նրանից, թե ով է որոշում կայացնում և այն իրավիճակից, որում այն կայացվում է: Կարևոր է նշել, որ այս խնդիրը բնորոշ չէ միայն Գազային: Այս խնդրին այս կամ այն աստիճան բախվել են գրեթե բոլոր հակամարտող կողմերը, և այն գնալով ավելի ու ավելի է բարդանում, քանի որ օրինակ՝ քաղաքացիական անձանց հաղորդակցության և հետախուզական տվյալների նպատակային հավաքագրման միջև սահմանազատումը դժվարացել է:

Հայտնաբերված թիրախների օպերատիվ կրակային խոցումը կարող էր իրականացվել կամ նույն սխեմայով, ինչ նշանացուցման տվյալներով կրակային խոցումը, կամ ինքնապաշտպանության շրջանակներում, ինչպես, օրինակ, ՀԱՄԱՍ հրթիռների արձակման հարթակների ոչնչացման դեպքում: Ի տարբերություն նշանացուցման տվյալների կրակային խոցման, երբ ՑԱԽԱԼ-ը որոշակի չափով վերահսկում էր գործընթացի ժամանակային պարամետրերը, և, հետևաբար, հարված հասցնելուց առաջ ավելի շատ ժամանակ ուներ ռազմական անհրաժեշտությունն ու համաչափությունը գնահատելու համար, օպերատիվ կրակային խոցումը պետք էր իրականացնել հնարավորինս սեղմ ժամկետում: Չնայած ՄՄԻ-ի հետ նույն պարտավորություններն

[1] **Կոմբատանտներ** (ֆր.՝ Combatant, ռազմիկ, զինվոր), միջազգային իրավունքում անձինք, ովքեր ուղղակի մասնակցություն ունեն զինված ընդհարման ռազմական գործողություններին: Կոմբատանտ են նաև ժողովրդական աշխարհազորի, կամավորական ջոկատների, դիմադրության շարժումների մասնակիցները, թշնամու դեմ տարերայնորեն մարտի ելած բնակչությունը, ինչպես նաև քաղաքացիական և ազգային-ազատագրական պատերազմների մասնակիցները, եթե ունեն հրամանատարներ և ենթարկվում են պատերազմի օրենքներին: https://hy.wikipedia.org/wiki/Կոմբատանտներ

էին գործում, որոշում կայացնելու համար ավելի քիչ ժամանակ կար, իսկ սխալի հավանականությունը մեծանում էր: Այն դեպքերում, երբ ՅԱԽԱԼ-ի զորքերը հակառակորդի հետ անմիջական շփման մեջ էին և կրակային աջակցություն էին պահանջում, հարվածի արդարացումը ծառայում էր ինքնապաշտպանությունը, իսկ դրա համաչափությունը գնահատվում էր ՅԱԽԱԼ-ի անձնակազմի համար ակնկալվող վնասով: Համաչափությունը և ռազմական անհրաժեշտությունը գնահատելիս հաճախ խնդիրներ էին առաջանում: Օրինակ՝ կարևոր թիրախը կարող էր գտնվել քաղաքացիական շենքերին մոտ: Սակայն, թիրախին մոտենալու համար ցամաքային զորքերի գրոհը պահանջում էր հարվածներ հասցնել, որը կարող էր մեծ վնասներ պատճառել քաղաքացիական կառույցներին: Ավիացիայի հարվածը կարող էր առաջացնել ավելի մեծ միանվագ ուղեկցող վնաս, բայց ավելի փոքր երկրորդական վնաս: Երբ նույն նպատակը սկսում էին գնահատել մի քանի պարամետրերով, կարող էին հեշտությամբ սխալվել: Առավել առաջնահերթ թիրախը, որը սկզբում ճանաչվել էր, բայց հետո անհետացել էր տեսադաշտից, հետագայում կարող էր նորից հայտնվել հետագա օպերատիվ խոցման անհրաժեշտությամբ, բայց առանց դրա հուսալի ճանաչման նկատմամբ վստահության նույն աստիճանի:

Նշանացուցման ամենադժվար խնդիրը այնպիսի համակարգի ստեղծումն էր, որը նախքան հարվածի համաչափությունը որոշելը կկատարվեր քաղաքացիական բնակչությանը հասցված վնասը նվազեցնելու համար ՅԱԽԱԼ-ի կողմից միջոցների ձեռնարկման պարտավորությունը: Ցանկացած մշակված համակարգ պետք է լիներ մասշտաբային, հաշվի առնելով քաղաքում գործող զորքերի քանակը: Ի վերջո, միակ մոտեցումը կայանում էր Գազայի հատվածը տեղամասերի բաժանել: Յուրաքանչյուր տեղամասի համար պետք է իրականացվեր և պարբերաբար թարմացվեր քաղաքացիական բնակչության խտության, հակամարտությունից առաջ նրա կարգավիճակի և հակամարտության ընթացքում տեղահանված անձանց թվի գնահատում: ՅԱԽԱԼ-ը սկսեց ուսումնասիրել առաջիկա օպերատիվ պլանները և համակարգեց բնակչության տեղաշարժի միջոցառումները այն շրջաններից, որտեղ կարող էին սկսվել ինտենսիվ մարտական գործողություններ: Սովորաբար դա կատարվեց թռուցիկների, բջջային հեռախոսներով ազդարարման և տարհանման ժամանակի և երթուղիների վերաբերյալ առաջարկությունների միջոցով: Այս տեղաշարժերի գնահատումը թույլ տվեց որոշել յուրաքանչյուր տեղամասում քաղաքացիական բնակչության ներկայության աստիճանը և նրա համար սահմանել ռազմական գործողությունների վարման համապատասխան կանոններ: Այս համակարգը, անշուշտ, զգալի թերություններ ուներ: Նախ, ոչ բոլոր քաղաքացիական անձինք կարող էին հեռանալ: Երկրորդ՝ քաղաքացիական անձինք սահմանափակ պատկերացում ունեին ՅԱԽԱԼ-ի կողմից հատկացված հատվածների սահմանների մասին, ուստի ինչ-որ մեկը կարող էր հեռանալ, բայց հետո վերադառնալ: Երրորդ՝ քաղաքացիական բնակչության տեղաշարժի միջանցքները դառնում էին խնդրահարույց ուղղություն, որից փորձում էին օգտվել ՀԱՄԱՍ-ի մարտիկները, իսկ փոխադարձ պատասխանատվության գոտում այդ միջանցքներին հարվածներ հասցնելու համաձայնեցումը, այդպիսի մասշտաբներով, շատ բարդ էր: Անխուսափելիորեն սխալներ էին առաջանում, իսկ որոշ հաղորդագրություններում խոսվում էր Գազայում ՅԱԽԱԼ-ի «ազատ կրակի գոտիների» ստեղծման մասին: Իրականում ՅԱԽԱԼ-ը ձգտում էր անկայուն տեղեկատվական ֆոնի պայմաններում ռազմական կազմավորումների հրամանատարներին տրամադրել մարտական գործողությունների վարման կանոններ, որոնք համապատասխանում էին այն շրջանին, որտեղ նրանք գործում էին:

Ի վերջո, յուրաքանչյուր բրիգադում օժանդակ անձնակազմի հետ միասին ստեղծվեց հետախուզական և հարվածային խմբեր, որոնք բաղկացած էին երկու մասնագիտությունների սպաներից, որոնք աշխատում էին տանդեմում: Այնուամենայնիվ, փոխադարձ պատասխանատվության գոտում նշանացուցման և համաձայնեցման գործընթացների զգալի մասը վերահսկվում էր դիվիզիայի շտաբի մակարդակով: Այս գործընթացների կատարելագործումն իրականացվեց այնքան ժամանակ, մինչև այն սկսեց ներառել հետևյալ փուլերը.

1. Հետախուզական տվյալների հավաքագրում և թիրախի գտնվելու վայրի որոշում,
2. քաղաքացիական բնակչությունից տվյալ տարածքը բավականաչափ ազատ լինելու որոշման համար թիրախի և տարհանման քարտեզի համեմատում,
3. թիրախին մոտ կրիտիկական քաղաքացիական ենթակառուցվածքների օբյեկտների առկայության ստուգում,
4. քաղաքացիական անձանց թիրախավորման և տարբերակման հնարավորության ստուգում,
5. բնակչության ազդարարման հարցի քննարկում,
6. ցանկալի արդյունքի հասնելու համար զինամթերք ճիշտ ընտրություն,
7. մարտ վարելու կանոններին համապատասխանության հավաստում,
8. հարված հասցնելու որոշման կայացում:

Գործնականում այս գործընթացի իրականացումը հանգեցրեց տարբեր արդյունքների: Հրամանատարության վերին օղակներում որոշում կայացնողներին հաճախ պակասում էր կառույցների ներսում քաղաքացիական անձանց ներկայությունը պարզելու բարձր հուսալիության աստիճանի դիտարկման գնահատման միջոցները: Ստորին մակարդակում որոշումներ կայացնողները հաճախ ավելի լուրջ էին ընկալում իրենց կամ իրենց անձնակազմի համար ուղղակի սպառնալիքը և պետք է որոշումներ կայացնեին սեղմ ժամկետներում: Մի շարք սխալներ թույլ տրվեցին, երբ հրամանատարության բոլոր մակարդակներում հարվածներ հասցնելու խթանները զորացրեցին միմյանց: Այն դեպքերում, երբ հայտնաբերված թիրախների օպերատիվ կրակային խոցման ընթացքում վերոնշյալ «եզերապատումը» տեղի չէր ունենում, ընդունվում էին որոշումներ, որոնք հանգեցնում էին ողբերգական հետևանքների, ինչպես դա եղավ 2024 թվականի ապրիլին World Central Kitchen մարդասիրական կազմակերպության աշխատակիցներին հասցված հարվածի դեպքում:

Այն ոլորտներում, որտեղ առկա հաստիքային ուժերի և միջոցների կազմում կիրառվում էին մարտավարական ԱԹՍ-ներ տվյալ մարտավարական օղակի ստորաբաժանումներն առավել արդյունավետ էին գործում: Պարզվել է, որ ի աջակցություն մարտավարական գործողությունների այդ համակարգերը, ինչպես նաև ՀՏԿՀ-ներ ունեցող ստորաբաժանումները կարող են վերահսկել ավելի մեծ քաղաքային տարածքներ և ճշգրիտ հարվածներ հասցնել: ՑԱԽԱԼ-ը զգալի օգուտ էր քաղում իր ստորաբաժանումներում տեսադաշտից դուրս ուղղորդման համակարգով հակահրթիռային համակարգերի առկայությունից: Օգտագործվող զինամթերքի փոքր չափերը թույլ էին տալիս դրանք կիրառել ճշգրտության ակնկալիքով: Որոշ դեպքերում այդպիսի համալիրներով մեկ վաշտը կարող էր պահպանել դիրքերը, որոնց պաշտպանության համար այլ պարագայում կպահանջվեր գումարտակի ուժեր:

Սինխրոնացման սահմանափակումների և օդային տարածքում փոխադարձ պատասխանատվության գոտու համաձայնեցման միջոցառումների պատճառով անհնար էր ամբողջությամբ հետևել ԱԹՍ-ներին կամ տեղեկություններ փոխանակել

դրանց կիրառման վերաբերյալ: Այդ պատճառով ՑԱԽԱԼ-ի ցամաքային ռազմական կազմավորումները բախվեցին յուրային ՀՕՊ միջոցների կողմից խոցման անխուսափելիությանը, որի հետևանքով խոցվեցին մեծ թվով սեփական ԱԹՍ-ներ: Ռազմական գործողությունները ցույց տվեցին, որ ԱԹՍ-ների կիրառման տեխնոլոգիաներն ու հայեցակարգերը առաջ են անցել ուսումնական ծրագրերի զարգացումից, և ՑԱԽԱԼ-ի զինծառայողները ստիպված են գործնականում սովորել, թե ինչպես մարտավարորեն կիրառել ԱԹՍ-ները և պաշտպանվել դրանցից: Իրավիճակը սրվեց նաև նրանով, որ փոքր հեռահարության ՀՕՊ շատ միջոցներ հեռացվել էին ՑԱԽԱԼ-ի զինանոցից և դուրս բերվել մարտակարգերից :

6. Տեղեկատվական պատերազմ

Ինչպես նշված է հոդվածի 1-ին գլխում, հոկտեմբերի 7-ից հետո սեփական գործողության պլանավորման ժամանակ ՑԱԽԱԼ-ը փորձեց առավելագույնս երկարաձգել «հնարավորությունների պատուհանը», որի ընթացքում միջազգային հանրության վերաբերմունքը թույլ կտար ապահովել Իսրայելի գործողությունների առավելագույն ազատություն: Նախ, ՑԱԽԱԼ-ը անմիջապես հրապարակեց հոկտեմբերի 7-ին տեղի ունեցած իրադարձությունների մասին տեղեկատվություն, քանի որ հետաքննություն էր իրականացվում, որպեսզի ՀԱՄԱՍ-ի իրականացրած վայրագությունները պատասխան գործողությունների արդարացման հետ մեկտեղ պահպանվեն տեղեկատվական դիսկուրսում: Հոկտեմբերի 7-ին արված տեսագրությունների փաթեթն ու դրանց ցուցադրումը լրագրողներին նույնպես ընդլայնեցին այն ժամկետը, որով հոկտեմբերի 7-ին տեղի ունեցածը հիմք դարձավ հետագա իրադարձությունների լուսաբանման համար: Շարունակվեց նաև էմոցիոնալ թեմաների հետ կապված կադրերի հրապարակումը, օրինակ՝ կանանց նկատմամբ վերաբերմունքը: Տեղեկատվական ակտիվությունն օգտագործվեց նաև, որպեսզի իսրայելցի պատանդների մասին պատմությունը մնա հանրային ուշադրության կենտրոնում և շարունակի ծառայել որպես ռազմական գործողությունների շարունակման հիմք:

Չնայած այն հանգամանքին, որ ՑԱԽԱԼ-ը հիմնականում ուշադրությունը կենտրոնացնում էր տեղեկատվության տարածմանը, այնուամենայնիվ, հակամարտության ընթացքում, տեղեկատվական-հոգեբանական գործողությունները ՑԱԽԱԼ-ի թույլ օղակն էին դարձել: Նախ, Իսրայելի ռազմական և քաղաքական հաղորդագրությունների հրապարակումների միջև առկա էր անհամապատասխանություն, ինչը խաթարում էր ՑԱԽԱԼ-ի կողմից ներդրված վերահսկողության բազմաթիվ միջոցառումների արդյունավետությունը: Երկրորդ՝ ՑԱԽԱԼ-ը բազմիցս ուռճացնում էր սպասելիքները, օրինակ՝ տեղեկացնելով, որ «Աշ-Շիֆա» հիվանդանոցի ստորգետնյա հարկերում էր գտնվում ՀԱՄԱՍ-ի զորքերի ղեկավարման կենտրոնը, թողարկելով թվայնացված հրամանատարական կետի պատկերով սխեմաներ: Իսկ հետո ի վիճակի չէր գտնել ինչ-որ ապացույց, որը կհամապատասխաներ այդ հայտարարությանը: ՑԱԽԱԼ-ը նաև խարխլեց իր հանդեպ վստահությունը, երբ «Աշ-Շիֆա» հիվանդանոցում հայտնաբերված շաբաթվա օրերի ձեռագիր ցուցակը ներկայացվեց որպես պահակների հերթապահության ժամանակացույց, ովքեր հսկում էին պատանդներին: Դա արաբագետ թարգմանիչների պակասի հետևանք էր:

Բացի այս մարտավարական սխալներից, հարկ է նշել այն, որ Իսրայելը նախաձեռնություն չցուցաբերեց վերահսկելու հակամարտության շուրջ ստեղծված պատմվածքը (нарратив): Դրա վառ օրինակն էր կորուստների մասին հաղորդա-

գրությունները: Ցանկացած քաղաքային գործողության ժամանակ պետք էր ակնկալել մեծ թվով քաղաքացիական զոհեր: Գազայի դեպքում լրագրողները սովոր էին ապավինել առողջապահության նախարարության կողմից հրապարակված զոհերի թվական տվյալներին: Ռազմական բախումների նախորդ փուլերում նախարարությունը զոհերի վերաբերյալ բավականին ճշգրիտ ամփոփ տվյալներ կազմելու փորձ ուներ, բայց ընթացիկ պատերազմում առողջապահության ենթակառուցվածքների ոչնչացման մակարդակի աճի պատճառով, նախարարությունը ստիպված էր փոխել իր մեթոդաբանությունը՝ կենտրոնացված հաշվետվական համակարգից անցնելով սոցիալական ցանցերի և հարազատների հաղորդագրությունների վերլուծությանը, ինչը ամփոփ թվերը դարձնում էր ավելի անհավանական: Սակայն տեղեկատվական-հոգեբանական գործողությունների տեսանկյունից խնդիրը նույնիսկ ընդհանուր հաշվարկի ճշգրտության մեջ չէր : Ոչ ոք չի վիճում, որ քաղաքացիական բնակչության շրջանում զոհերի թիվը մեծ էր, բայց քանի որ առողջապահության նախարարությունը չէր տարբերակում կոմբատանտների և ոչ կոմբատանտների շրջանում կորուստներին, լրագրողների կողմից այս տվյալների օգտագործումը արդեն քաղաքացիական բնակչության և մարտիկների շրջանում կորուստների հարաբերակցության վերաբերյալ հանգեցնում էր աղավաղված պատկերացումների: Ավելին, քանի որ նախարարությունը վերահսկվում էր ՀԱՄԱՍ-ի կողմից, կրիտիկական պահերին այն կարող էր ապատեղեկատվություն տարածել: Օրինակ, լրագրողները հայտարարել էին, որ հիվանդանոցին հասցված ավիահարվածի հետևանքով զոհվել է 500 քաղաքացիական անձ, ինչը հետագայում մեծ շփոթություն էր առաջացրել, մինչդեռ իրականում հիվանդանոց ընկած պաղեստինյան հրթիռն ավելի քիչ թվով քաղաքացիական անձանց էր խոցել: Իսրայելը արագորեն օգտագործեց նախարարության տվյալների բազմաթիվ անհամապատասխանությունները՝ փորձելով խաթարել իր նկատմամբ ձևավորված բացասական վստահությունը, սակայն այդ փորձերը ձախողվեցին, քանի որ տվյալների այլընտրանքային աղբյուր գոյություն չուներ: ՑԱԽԱԼ-ը չէր ձգտում հրապարակել իր սեփական գնահատականները և չէր փորձում ակտիվորեն բացատրել քաղաքացիական բնակչության շրջանում կորուստները: Ավելին, երբ ՑԱԽԱԼ-ը հրապարակում էր կոմբատանտների շրջանում կորուստների գնահատականները, այն, որպես կանոն, հակադրվում էր Գազայի հատվածի առողջապահության նախարարության կողմից հաղորդված ընդհանուր կորուստներին, չնայած պնդում էին, որ հենց այդ աղբյուրն էր հանդիսանում ոչ ճշգրիտը:

Չմարող քննարկումների մեկ այլ առարկա էր ՑԱԽԱԼ-ի զինծառայողների կողմից բջջային հեռախոսների և ինտերնետի օգտագործումը: Սա խնդիրներ էր ստեղծում, օրինակ, բանտարկյալների ձերբակալման ժամանակ: Որոշ շրջաններում ՑԱԽԱԼ-ը ձերբակալել էր զգալի թվով մարդկանց: Հաշվի առնելով, որ ՀԱՄԱՍ-ի զինյալները կրում էին քաղաքացիական հագուստ՝ առանց տարբերանշանների, և մարտական գործողությունների տարածքներում դեռ կային քաղաքացիական անձինք, որոնցից մի քանիսը մասնակցում էին այդ գործողություններին, կոմբատանտներին ոչ կոմբատանտներից տարբերելը հեշտ չէր: Դա պահանջում էր ձերբակալություններ և ձերբակալվածների մասին տեղեկատվության մշակում, և հաշվի առնելով այն փաստը, որ ՀԱՄԱՍ-ը վաղուց օգտագործում էր ինքնաշեն պայթուցիկ սարքեր իսրայելցի զինվորներին խոցելու համար, ինչպես նաև հաշվի առնելով «Իսլամական պետության» տարածված պրակտիկան՝ մահապարտ ահաբեկիչներին հանձնվողների խմբերի մեջ մտցնելու համար, ՑԱԽԱԼ-ը ձերբակալվածներից պահանջում էր մերկանալ: Ձերբակալվածներին թույլ չէին տալիս հագնվել զննումից

անմիջապես հետո, երբ անգամ նրանք ճանաչվել էին անզեն, ինչպես նաև տեսանկարահանում էին զննության ամբողջ ընթացքը: Այն փաստը, որ ժամանակակից մարտադաշտում մեծ թվով զինծառայողներ ունեին տեսախցիկներ, զուգորդված ամենատարբեր իրադարձություններ նկարահանելու աճող մշակութային միտումով, նշանակում էր, որ ձերբակալվածների նկարահանումները բավականին տարածում էր ստանում: Սա առավել տարածված էր այնտեղ, որտեղ պահեստազորայինները կամ նոր մոբիլիզացված քաղաքացիական անձինք էին գտնվում: Իրոք, ՑԱԽԱԼ-ի որոշ զինծառայողների վատ կարգապահությունը զգալի վնաս էր պատճառում վերոնշյալ դեպքերը նկարահանելուց և հրապարակելուց հետո: Այնուամենայնիվ, կարելի է երկու դաս քաղել: Նախ, տեղեկատվությունը նկարահանելու և տարածելու համար բջջային հեռախոսների անվերահսկելի օգտագործումը կարող էր լուրջ վնաս հասցնել: Երկրորդ, թեև Մեծ Բրիտանիան և ՆԱՏՕ-ի այլ երկրներ ունեն գերեվարված անձանց հետ վարվելու դոկտրին, պարզ չէ, թե արդյոք այդ գործողությունները իրականացնելու համար պատրաստվածության բարձր մակարդակը կբավարարի, երբ մեծանան դրանց ծավալները: Չնախատեսված մեծ թվով գերեվարվածների հետ աշխատելու գործընթացները նույնպես ապատեղեկատվության տարածման զգալի ռիսկեր են պարունակում:

Հարկ է նշել, որ այս հակամարտությունն ուներ իր առանձնահատկությունները, որոնք այն հատկապես բարդ միջավայրն էին ստեղծում արդյունավետ տեղեկատվական և հոգեբանական գործողություններ իրականացնելու համար: Համաշխարհային մասշտաբով կա լսարան, որը հարմարեցված է կամ մեկ կողմի կամ մյուս կողմի օգտին, և, հետևաբար, հակամարտության մեջ անմիջականորեն ներգրավված գործող անձինք ավելի քիչ հնարավորություններ ունեն ընկալումներ ձևավորելու համար: Փոխարենը, տեղեկատվությունը կարող է մեկնաբանվել ամենաքիչ բարենպաստ լույսի ներքո կողմերից յուրաքանչյուրի կողմնակիցների կողմից, այնուհետև իրենց իսկ համայնքների մարդկանց միջոցով ամրապնդել ամենավատ մեկնաբանությամբ: Իսրայելի ներսում գերակշռում էր այն զգացողությունը, որ խաղը չարչարանք չարժե, և որ Արևմտյան քաղաքական գործիչների ջերմությունը, որոնք Իսրայելին դրդում էին որոշակի գործողությունների կամ անգործության, մեծապես պայմանավորված էին իրենց պետություններում ներքաղաքական ճնշման մակարդակով, այլ ոչ թե կայուն համոզմունքով, որ իրավիճակը կարող էր բարելավվել: Նման հուսահատությունը չի կարող նպաստել բարենպաստ միջավայրի ձևավորմանը:

7. Հումանիտար օպերացիաներ

Մինչև հակամարտության սկսվելը Գազայում կյանքի պայմաններն արդեն անբավարար էին: 20-րդ վերջին և 21-րդ դարի սկզբին Գազան արագորեն ուրբանիզացվեց, ընդ որում բնակչության աճը գերազանցեց ռեսուրսներով սահմանափակված քաղաքապետարանի հնարավորությունները, այն է բնակիչներին հիմնական ծառայություններ մատուցելու հնարավորությունից: Քաղաքային պլանավորումը վատ էր, իսկ քաղաքը խմելու ջրով և էլեկտրաէներգիայով ապահովող ենթակառուցվածքները չունեին ոչ կայունություն, ոչ էլ պաշարներ: Իրավիճակը սրվեց ՀԱՄԱՍ-ի կողմից շինանյութերի ռազմական նպատակներով օգտագործմամբ, ինչը ստիպեց ՑԱԽԱԼ-ին է պահպանել Գազայի հատվածի շրջափակումը և սահմանափակեց երկակի նշանակության նյութերի հասանելիությունը: ՑԱԽԱԼ-ը խաղաղ բնակչության շրջանում ուներ հսկողության և հետախուզական տեղեկատվության հավաքման լայն հնարա-

վորություններ, սակայն հաշվի առնելով Գազայի հատվածում 2023 թվականի նախորդող տարիներին ֆիզիկական ներկայության բացակայությունը, և այն փաստը, որ այդ միջոցները ուղղված էին անվտանգության ապահովմանը և նախատեսված չէին մարդասիրական աշխատանքի համար, անհրաժեշտ էր այն համալրել մարդասիրական մեխանիզմներով, որոնք կարող էին գործել բազմակողմ հիմունքներով և միավորել տարբեր ոչ կառավարական կազմակերպություններին, միջազգային գործակալություններին և Իսրայելի կառավարական կառույցներին:

Հաշվի առնելով բնակչության թիվաքանակը և հակամարտության սկսվելուց անմիջապես հետո ստեղծված խառնաշփոթը, խնդրո առարկա դարձավ մարդասիրական օգնության ցուցաբերման հարցը: Վերջինիս պահանջը էլ ավելի ուժգնացավ Գազայի ենթակառուցվածքի վնասման պատճառով, երբ անհրաժեշտություն առաջացավ շշալցված խմելու ջրի մատակարարման խնդիրը: Ի սկզբանե Գազայի մատակարարումները դժվարացել էին այն պատճառով, որ Իսրայելը ձգտում էր քաղաքը մեկուսացրել և ամբողջովին պաշարել: Քաղաքական մակարդակում շրջափակումը դարձել էր քննարկման առարկա՝ կապված պատանդների ազատ արձակելու ճնշման լծակների հետ, ընդ որում ՀԱՄԱՍ-ը, ի պատասխան հարվածների, սպառնում էր մահապատժի ենթարկել պատանդներին: Հոկտեմբերի 7-ից հետո ընդունված այս նախնական միջոցը հակաարդյունավետ էր և արագորեն չեղարկվեց միջազգային հանրության ճնշման ներքո: Սակայն այն բանից հետո, երբ մարդասիրական օգնությունը սկզբունքորեն թույլատրվեց, այնուամենայնիվ Գազային բավարար ծավալով մատակարարելու խնդիրը բարդ էր:

Հենց որ ՑԱԽԱԼ-ի ուժերը սկսեցին գործել Գազայի տարածքում, մարդասիրական օգնության հոսքերի հիմնական սահմանափակումը դարձավ բեռների զննումը՝ ՀԱՄԱՍ-ի ռազմական մատակարարումը կանխելու նպատակով: Օպերացիայի վաղ փուլերում օգնության ստացման արագությունը կազմում էր օրական մոտ 70 բեռնատար, ինչը ակնհայտորեն բավարար չէր բնակչությանը աջակցելու համար: 2024-ի սկզբին այս ցուցանիշը հասավ օրական 140 բեռնատարի, իսկ հոդվածը գրելու պահին այն կազմում էր օրական 300-ից 400 մեքենա: Սակայն այդ ցուցանիշները նույնպես ցածր էին, քան մինչ հակամարտությունը:

Բեռնատարներով մատակարարումների ամենախնդրահարույց բաղադրիչը հանդիսանում էր այն հարցը, թե ում վստահել բեռների զննումը: Հաշվի առնելով, որ պատերազմից առաջ ՀԱՄԱՍ-ը Գազա էր տեղափոխել սպառազինության մեծաքանակ նմուշներ, Իսրայելը զգուշանում էր այն անձանցից, ովքեր նախկինում ղեկավարել էին անցակետերն ու տեսչությունները: Այս անվստահությունը, հավանաբար, հանգեցրել էր համեմատաբար թույլ համակարգման այն կազմակերպությունների հետ, որոնք փորձում էին բեռներ տեղափոխել Գազա: Օրինակ՝ մարդասիրական կազմակերպությունները հայտնվել էին անորոշության մեջ, առ այն, թե որ իրերն են համարվում երկակի նշանակության արտադրանք, որոնց տեղափոխումն արգելված էր:

Գազային օգնություն ցուցաբերելու գործընթացը բարելավելու բազմաթիվ եղանակներ կան: Այնուամենայնիվ, նրանցից շատերը կախված են հատուկ պայմաններից: Այս հոդվածի նպատակների համար մարդասիրական օպերացիաների ամենահրատապ խնդրահարույց ոլորտը օգնության բաշխումն էր: Խնդիրը բարդանում էր քաղաքացիական օբյեկտներին ՀԱՄԱՍ-ի դիրքերի անմիջական մոտիկությամբ, ինչը նշանակում էր, որ Գազայի գրեթե ցանկացած հատված անխուսափելիորեն հարում էր այն վայրերին, որտեղից կարող էին իրականացվել հարձակումները:

Այսպիսով, ռազմական գործողությունների շրջանները հումանիտար գործողությունների շրջաններից առանձնացնելը բարդ էր:

Բացի այդ, Գազա մարդասիրական օգնություն մուտք գործելու պարզ թույլտվությունը նույնպես դժվարություններ ունեցավ: Նախ, այնտեղ, որտեղ օգնության կարիքն ամենամեծն էր, քաղաքացիական բնակչության շրջանում հանգեցրեց բռնության, ինչի պատճառով մարդասիրական առաքելությունների աշխատակիցները պաշտպանության կարիք ունեցան: Նույնիսկ այնտեղ, որտեղ գործընթացներն ավելի կարգավորված էին, ամեն ինչ հարթ չէր ընթանում: Սեփական զորքերին ապահովելու համար ՀԱՄԱՍ-ի կողմից իրականացվող բեռների գողությունը, անկասկած, հետաքրքրություն էր ներկայացնում ՑԱԽԱԼ-ի համար: Ընդսմին, սննդամթերքի նկատմամբ վերահսկողությունը բնակչության նկատմամբ վերահսկողություն հաստատելու ուղիղ ճանապարհ էր: Քանի որ պատերազմում Իսրայելի նպատակներից մեկը բնակչությանը վերահսկելու հնարավորություններից ՀԱՄԱՍ-ի զրկումն էր, ուստի ՀԱՄԱՍ-ին օգնության բաշխումը վերահսկելու հնարավորություն տալը ուղղակիորեն հակասում էր Իսրայելի նպատակներին: Լրացուցիչ բարդություններ էին առաջացնում նաև Իսրայելում, երբ Իսրայելի քաղաքացիները, ի նշան բողոքի, հարձակվում էին մարդասիրական օգնություն հասցնող շարասյուների վրա: Հատկանշական է, որ ՑԱԽԱԼ-ը պասիվ էր մատակարարումների այդպիսի խափանումների կանխարգելման գործում: Եվ չնայած գուցե նախընտրելի կլիներ մարդասիրական գործունեությունը թողնել համապատասխան կազմակերպություններին և դրանով իսկ որոշակի տարանջատում ապահովել ՑԱԽԱԼ-ի և քաղաքացիական բնակչության միջև, գործնականում ՑԱԽԱԼ -ը ստիպված էր ակտիվ մասնակցություն ունենալ Գազայում օգնության պաշտպանության և բաշխման գործում: Նույնիսկ այն դեպքերում, երբ մարդասիրական օգնություն ցուցաբերողները ղեկավարում էին առաքման աշխատանքները, նրանց տեղաշարժը պետք էր համաձայնեցվեր ՑԱԽԱԼ-ի զորքերի տարաշարժման և կրակի հետ: Մեկ այլ բարդացնող գործոն էր ՑԱԽԱԼ-ի պահանջը՝ որոշ ռեսուրսների և ծառայությունների հասանելիությունը վերականգնելու համար գործի դնել ինժեներական զորքերի հնարավորությունները:

ՑԱԽԱԼ-ի համար մշտական խնդիր էր նաև այն, որ օգնության բաշխումը կարող էր անցնել ՀԱՄԱՍ-ի վերահսկողության տակ և օգտագործվել տեղի բնակչության նկատմամբ վերահսկողությունը պահպանելու համար՝ դրանով իսկ խոչընդոտելով Իսրայելի ռազմական նպատակներից մեկի իրականացմանը: Այնուամենայնիվ, եթե ՑԱԽԱԼ-ը ստանձներ բաշխումը, ապա մարդասիրական օգնության բաշխման կետը կդառնար հարձակման թիրախ, որին ՑԱԽԱԼ-ը ստիպված կլիներ պատասխանելու՝ վտանգելով խաղաղ բնակիչների կյանքը անխուսափելի խաչաձև կրակի ժամանակ: Առկա էր նաև, հուսահատ քաղաքացիական անձանց և զինծառայողների միջև բախումների վտանգը, որոնք կարող էին ուժ կիրառել ինքնապաշտպանության համար:

Մարդասիրական իրավիճակի մեկ այլ ասպեկտ էր առողջապահական ենթակառուցվածքների և ղեկավարման վրա ազդեցությունը: Նախ՝ ՑԱԽԱԼ-ը զորքերի խոշոր տեղաշարժի ժամանակ մի քանի անգամ արգելափակել էր ինտերնետը և հեռախոսային ցանցի հասանելիությունը Գազայում, որպեսզի սահմանափակի տեղաշարժի ընթացքի մասին ՀԱՄԱՍ-ի տեղեկանալու հնարավորությունները: Սա ռազմական իմաստ ուներ, բայց նաև խաթարում էր առողջապահական ծառայությունների մատուցման համակարգումը: Այդ պատճառով ՑԱԽԱԼ-ի վրա զգալի

միջազգային ճնշում էր գործադրվում առողջապահական համակարգի աշխատանքը վերականգնելու նպատակով: Գազայում ռազմական գործողությունները կործանարար ազդեցություն ունեցան առողջապահական ենթակառուցվածքների վրա, և այդ ազդեցության հետևանքները երկարաժամկետ բնույթ են կրելու: ՑԱԽԱԼ-ը փորձում էր չկրակել անմիջապես հիվանդանոցի կարգավիճակ ունեցող գործող շենքերի վրա: Բայց, երբ հիվանդանոցները հայտնվում էին մեկուսացման մեջ, նրանք դադարում էին գործել: Դրանից հետո ՀԱՄԱՍ-ը, որպես կանոն, զբաղեցնում էր այդպիսի հիվանդանոցային համալիրները, որոնցից էր «Աշ-Շիֆան», և սկսում էր կառավարել դրանք: Այս պարագայում հիվանդանոցը կորցնում էր իր պաշտպանված լինելու կարգավիճակը, և տարածքում և դրա շրջակայքում տեղի ունեցած բախումները ոչնչացնում էին համալիրը: Դա ինչ-որ չափով նման էր միջազգային կոալիցիայի ուժերի կողմից Մոսուլի հիվանդանոցի շենքի ռմբակոծմանը, քանի որ այն դադարել էր գործել որպես բուժհաստատություն և զբաղեցվել էր «Իսլամական պետության» զինյալների կողմից (արգելված է ՌԴ-ում): Չնայած այդպիսի գործողությունները կարող են օրինական լինել, առողջապահական հաստատությունների ոչնչացման երկարաժամկետ հետևանքները բավականին լուրջ էին: Ավելին, բժշկական օգնության տրամադրման այլընտրանքային տարբերակները հեշտ հասանելի չէին, հատկապես բուժհաստատությունների աշխատանքի պահպանման համար անհրաժեշտ դեղորայքի մատակարարման ընդհատումների պայմաններում:

Խելամիտ է եզրակացնել, որ ՑԱԽԱԼ-ը փորձում էր միջոցներ ձեռնարկել լուծելու հումանիտար խնդիրները՝ միաժամանակ շարունակելով հետապնդել իր ռազմական նպատակները: Սակայն ձեռնարկված միջոցառումներից ոչ մեկը չկանխեց քաղաքացիական բնակչության զգալի վնասը: Սանիտարական նորմերի, ակտիվ մարտական գործողությունների շրջաններից դուրս գալու հնարավորության, պարենամթերքի և բուժսպասարկման հասանելիության տեսանկյունից Գազայում կենսապայմանները վատթարագույն վիճակում էին: Հումանիտար կազմակերպությունների կողմից ՑԱԽԱԼ-ին ներկայացվող շատ պահանջներ անհամատեղելի էին բանակի առջև դրված ռազմական խնդիրների կատարման հետ: Այս հակասական հրամայականները խճճված էին ու բարդ, և երկարաժամկետ հեռանկարում քաղաքական առումով շատ վնասակար էին ՑԱԽԱԼ-ի համար: Քաղաքային պատերազմների պայմաններում մարդասիրական օգնություն ցուցաբերելու մեթոդների ուսումնասիրությունն ու կատարելագործումը, երբ ռազմական գործողություններն ընթանում են կարևոր օբյեկտների անմիջական հարևանությամբ, խնդիր է, որն արժանի է հետագա քննարկման բրիտանական բանակի և այլ պաշտպանական գերատեսչությունների կողմից:

Եզրակացություն

Գազայի հակամարտությունից ՑԱԽԱԼ-ի քաղած շատ դասեր ուղղակի կապ ունեն այլ պետությունների զինված ուժերի հետ: Այնուամենայնիվ, կան դիտարկումներ, որոնք այնքան էլ կարևոր չեն ՑԱԽԱԼ-ի համար, բայց հատուկ նշանակություն ունեն բրիտանական բանակի համար: Պետք է նաև ընդունել, որ Գազայում ռազմական գործողություններն ունեին իրենց առանձնահատկությունները, որոնք կախված էին ներտարածաշրջանային համատեքստից: Դասեր քաղելու ներքին գործընթացին զուգահեռ, ՑԱԽԱԼ-ը ստիպված էր հաշվի առնել Գազայի փորձը, որպեսզի Գազայում իրականացված մարտավարական փոփոխությունները չկիրառ-

վեն Լիբանանի հետ հյուսիսային սահմանին, որտեղ դրանցից մի քանիսի հետևանքները կարող են վտանգավոր լինել: Գազայում ռազմական գործողությունների առանձնահատկություններից մեկն այն էր, որ ՀԱՄԱՍ-ը, ի տարբերություն «Հեզբոլլահի», չուներ արդյունավետ հրետանի: Դա ՑԱԽԱԼ-ին ապահովվեց թիկունքային ապահովման միջոցների անվտանգությունը, ինչպես նաև հնարավորություն տավեց զորքերը կենտրոնացնել այնպես, ինչպես հնարավոր չէր անել, օրինակ, Ուկրաինայում, որտեղ այդպիսի խմբավորումները ակնթարթորեն վտանգի մեջ էին հայտնվում: Բրիտանական բանակը, որը պետք է պատրաստ լինի Ռուսաստանի հետ պատերազմի՝ ՆԱՏՕ-ի զսպման գործուն դոկտրինի շրջանակներում, պետք է նպատակ ունենա առավելագույնի հասցնել հարվածային ներուժը՝ առանց միջոցների և ուժերի մասշտաբային կենտրոնացման: Այդ նպատակով ԱԹՍ-ներով և ՀՏԿՀ -ներով զինված իսրայելական խառը վաշտերի ցրման մակարդակները կարող են ուսանելի լինել քաղաքային տարածքը արդյունավետորեն ծածկելու համար անհրաժեշտ ուժերի և միջոցների խտության տեսանկյունից: Այնուամենայնիվ, իսրայելական հետևակի ցրման մակարդակը փոքր ցուցիչ է, երբ դիտարկվում է որպես հնարավոր տարբերակ Ռուսաստանի հետ հակամարտության ոսպնյակի միջոցով:

Մյուս հնարավոր տարբերակը Գազայում ՑԱԽԱԼ-ի ռազմական գործողությունների և պատերազմի այլ թատերաբեմերի միջև, ներառյալ Իսրայելի հյուսիսային սահմանը Լիբանանի հետ, ՑԱԽԱԼ-ի կողմից էլեկտրամագնիսական (հաճախականության) սպեկտրի հասանելիության ամբողջական գերակայությունն էր: Հյուսիսային սահմանին, որտեղ «Հեզբոլլահը» իսրայելական դիրքերին հարվածելու համար կիրառում էր կամիկաձե դրոններ և հարվածներ հասցնելու այլ միջոցներ, ՌԷՊ-ի անհրաժեշտությունը այնքան էր լրացրել հաճախականության սպեկտրը, որ ՑԱԽԱԼ-ը ստիպված էր վերադառնալ թղթային քարտեզներին և միայն մասամբ ապավինել թվային քարտեզագրման միջերեսներն: Բրիտանական բանակի համար, հաշվի առնելով ռուսական ՌԷՊ միջոցների հնարավորությունները, Իսրայելի հյուսիսային սահմանին ծագած մարտերի կառավարման խնդիրներն առավել ուսանելի են, քան այն, թե ինչպես էր զորքերի կենտրոնացված կառավարումը իրականացվում Գազայում: Ստորաբաժանումների թևային սահմանազատման որոշումը մնում էր արդիական, բայց Գազայում իրականացվող «յուրայիններ» և «օտարներ» տարբերակումը հաճախականության սպեկտրում չէր կարող ապահովվել հզոր դիմակայության պայմաններ:

Մեկ այլ նկատառում էլ կապված է հակառակորդի ուժերի և միջոցների մասշտաբների հետ: ՀԱՄԱՍ-ը գործում էր հիմնականում երկու-հինգ հոգուց բաղկացած փոքր խմբերով, ընդ որում՝ հարձակումները մեկ շրջանում հաճախ իրականացվում էին մինչև հինգ խմբերի կողմից: ՀԱՄԱՍ-ը հազվադեպ էր ուժերը կենտրոնացնում դասակի մակարդակից բարձր: Չնայած այն հանգամանքին, որ ՀԱՄԱՍ-ի զինված կազմավորումների 40,000 անդամները տպավորիչ ուժ էին ներկայացնում, հոկտեմբերի 7-ից հետո մարտի դաշտում նրանց գործողությունների մասշտաբները չափազանց սահմանափակ էին: Բրիտանական բանակի համար որոշ առումով ավելի օգտակար է իրենց դիտարկել ՀԱՄԱՍ-ի դերում՝ քաղաքային շրջանները պաշտպանելու առաջադրանքով՝ թիկունքից դեպի ափամերձ գիծ մուտք ունենալով, դիմակայելով քանակապես գերազանցող հակառակորդին, որի հիմնական մարտավարական միավորը դիվիզիան էր: Հենց ռուսական ուժերին արդյունավետ հակազդելու կարողությունն է, որ ընկած է ցամաքային գործողությունների հայեցակարգի հիմքում, և, հետևաբար, բրիտանական բանակի ներդրումը ՆԱՏՕ-ի

զսպման հնարավորություններին: Դիտարկելով այս տեսանկյունից որոշ դասեր ակնհայտորեն առաջին պլան են մղվում:

Գազայում ռազմական գործողությունների ընթացքում նախաձեռնություն ձեռք բերելու հարցում Բրիտանական բանակին վերաբերող հիմնական դիտարկումը կրակային ուժի վճռական դերն է: Ի վերջո, ՑԱԽԱԼ-ի ռազմական կազմավորումների արձագանքման արագությունը և կրակային հզորության գերազանցությունը ամենամեծ վնասը հասցրեց ՀԱՄԱՍ-ի հարձակողական ուժերին, և որքան ավելի շատ ուժեր և միջոցներ էր կենտրոնացնում ՀԱՄԱՍ-ը, այնքան ավելի մեծ կորուստներ էր ունենում: Բացի այդ, ՑԱԽԱԼ-ի ստորաբաժանումների հետ բախումներում թեև ճնշող կրակն արդեն թույլ չէր տալիս ՀԱՄԱՍ-ին կենտրոնացնել իր ուժերն ու միջոցները, նրա փոքր խմբերի սահմանափակ կրակային հզորությունը նույնպես նպաստեց նրանց արագ ճնշմանը և ոչնչացմանը: Բազմաթիվ հրամանատարաշտաբային զորավարժությունների ընթացքում բրիտանական բանակը զորավարժությունների սցենարով ներկայացված ավելի բարձր մակարդակի զորային կազմավորումների գործադրմամբ փորձում է հաղթահարել մարտավարական ստորաբաժանումների կրակային հզորության նվազեցմանը: Սակայն իրական մարտական իրավիճակում այդ շարակարգերը կունենան այլ ուղղություններ, որոնց անհրաժեշտ կլինի աջակցել, իսկ կրակային խոցման միջոցները չեն կարող միանգամից ուղղվել բազմաթիվ թիրախներին: Դասը պարզ է՝ մարտավարական մակարդակում կրակային հզորությունը հսկայական նշանակություն ունի: Բրիտանական բանակի համար ռիսկն այն է, որ ցամաքային գործողությունների հայեցակարգի դրույթները կարող են ֆինանսավորում և գործնական կիրառում չգտնել, և այդ ժամանակ բրիտանական զորքերը, որոնք պատրաստվել էին ՑԱԽԱԼ-ի օրինակով կհայտնվեն ՀԱՄԱՍ-ի դերում: Ուստի բրիտանական բանակի կրակային հզորության բարձրացումը առանձին տակտիկական միավորների մակարդակով պետք է դառնա գլխավոր առաջնահերթություններից մեկը :

Բրիտանական բանակի համար քաղաքում դիրքերը պահելու երկրորդ արժեքավոր դասը ՀՕՊ-ի կարևորությունն է: Իսրայելական թռչող սարքերին և հետախուզական ապահովման միջոցներին սպառնալու հնարավորության բացակայությունը ՀԱՄԱՍ-ին թույլ չէր տալիս կենտրոնացնել իր ուժերն ու միջոցները և մաններելու տարածք ստանալ: Հենց ՑԱԽԱԼ-ը բացահայտում էր հակառակորդի պաշտպանության ուժեղ կողմերը, դրանք անմիջապես խոցվում էին: Օդային ռումբերի մարտական մասի զանգվածը գերազանցում է հրետանային արկերը, ուստի քաղաքային կառույցների պաշտպանական առավելությունները կարելի էր շրջանցել, եթե հնարավոր էր ճշգրիտ ռմբակոծություններ իրականացնել միջին բարձրությունից: Այսպիսով, քաղաքային կառույցներում մարտական գործողություններ վարելու համար անհրաժեշտ է հակաօդային պաշտպանություն, որը ներկայացված է ինչպես զենիթային համալիրներով, այնպես էլ օդային հարձակման միջոցներով: Խոշոր հակամարտության դեպքում հակառակորդի հակաօդային պաշտպանության խտությունը նշանակում է, որ ՀՕՊ թռչող սարքերի առկայությունը կարող է ծայրաստիճան սահմանափակվել: Այսպիսով, ակնհայտ է որ ցամաքում արդյունավետ մարտեր վարելու համար բրիտանական բանակը պետք է ի վիճակի լինի խոցել թշնամու արագընթաց ինքնաթիռները միջին բարձրություններում: Այս դասը արտացոլված է Մոսուլում, Ռաքքայում և Ուկրաինայի տարածքում ձեռք բերված փորձում: Մոսուլում հակառակորդի պաշտպանական դիրքերը արդյունավետորեն ոչնչացնելու կոալիցիայի ավիացիայի կարողությունը ստիպեց «Իսլամական պետությանը» (արգելված է

ՌԴ-ում) պաշտպանվել այնտեղ, որտեղ նրաց հնարավոր չէր հայտնաբերել: Բավական էր որպեսզի ռուսական ավիացիան քաղաքային բնակավայրերի միջին բարձրության օդային տարածքներում վերահսկողություն հաստատեր՝ արագորեն ոչնչացվում էին պաշտպանական դիրքերը և ցամաքային ուժերը գրավում էին բնակավայրը:

Երրորդ դասն այն է, որ քաղաքային կառուցապատման պայմաններում հարձակողական և պաշտպանողական գործողությունների միջև հարաբերակցությունը «միկրոմարտավարական» է: Եթե հակառակորդը կարող է շրջանցել պաշտպանության թևը, ապա նրան դուրս մղելու համար պահանջվելու է անցում կատարել հարձակողական գործողությունների, որն ուղեկցվելու է համապատասխան դժվարություններով: Հետևաբար, քաղաքային պայմաններում հակառակորդի տեղաշարժի տեմպերի դանդաղումը կարևոր նշանակություն ունի վերատեղակայման և պաշտպանության ապակազմակերպման կանխարգելման համար: Այս նպատակով ամենաարդյունավետ գործիքը հակառակորդի զորքերի շարժունակությունը նվազեցնելու միջոցների կիրառումն է, ինչը բրիտանական բանակին խիստ պակասում է, թեև դրանք անհրաժեշտ են:

Այն ազատությունը, որը զորքերը ստանում են արդյունավետ հակաօդային պաշտպանությունից և հետախուզական ապահովման միջոցներին հակազդելուց, թույլ է տալիս նրանց մաններել քաղաքում, և դա քաղաքային պայմաններում մարտական գործողությունների վարման համար կարևոր նշանակություն ունի: Քաղաքային տարածքի որոշակի հատվածը պահելու համար զորքերի բարձր կենտրոնացիայի անհրաժեշտությունը նշանակում է, որ բանակների մեծամասնությունը պետք է ընտրի, թե քաղաքի որ տարածքներում են հարձակողական գործողություններ իրականացնելու ժամանակի յուրաքանչյուր կոնկրետ պահին: Բացի այդ, ամենուր չէ, որ քաղաքային կառուցապատման պայմանները նույնն են: Գազայի Վաղիի և տեղաշարժման այլ միջանցքների նշանակությունը անհամաչափ մեծ էր: Լինելով ՑԱԽԱԼ-ի վերահսկողության տակ՝ նրանք սահմանափակում էին ՀԱՄԱՍ-ի նյութատեխնիկական ապահովման և վերատեղակայման հնարավորությունները: Գյուղական և քաղաքային տարածքների սահմանների վերահսկողությունն անհրաժեշտ էր նաև քաղաքային հենակետերում զորքերը ապահովելու համար: Այնպիսի զգայուն վայրերը, ինչպիսիք են հիվանդանոցները նույնպես զգալի ձևավորող ազդեցություն ունեն քաղաքային պայմաններում տարաշարժման տեմպի և մասշտաբի վրա: Քաղաքը չպետք է դիտարկվի որպես միատարր միջավայր: Շատ կարևոր է, որ տեղանքի գնահատումը բացահայտի հակառակորդի պաշտպանության թույլ կողմերը, որոնք կարող են օգտագործվել առաջխաղացման համար՝ առանց պաշտպանական դիրքերը զբաղեցնող պատրաստված հակառակորդի հետ անմիջական բախման անհրաժեշտության: Մանրակրկիտ պլանավորումը կարող է քաղաքային տարածքը վերածել պաշտպանի դեմ: Որպեսզի զորքերի շարժունակությունը չսահմանափակվի քաղաքաշինությամբ, անհրաժեշտ է ինժեներական զորքերի զգալի ներդրում: Դա վերաբերում է շարժունության ապահովմանը, ճեղքմանը, պայթյունավտանգ առարկաների որոնմանը և վնասազերծմանը, ինչպես նաև ինժեներական հետախուզությանը: Այս գործունեությունը պետք է աջակցվի նաև անհրաժեշտ քանակությամբ ինժեներական և տեխնիկական աջակցության միջոցներով: Այն գաղափարը, որ զորքերը կարող են բավարարվել առանց այդ օժանդակող կազմավորումների, անհիմն է :

Բրիտանական բանակը պետք է քննարկի այն հարցը, թե ինչպես է իրականացնելու մարտի ղեկավարումը քաղաքի կառուցապատման պայմաններում: Քաղաքային պայմաններում փոխադարձ պատասխանատվության գոտիների համաձայնեցումը պահանջում է մարտավարություն, տեխնիկա և ապահովում, որոնք տարբերվում են քաղաքից դուրս կրակի կառավարման միջոցառումներից, քանի որ հակառակորդը հաճախ գտնվում է «յուրային» ռազմական կազմավորումների միջանկյալ տարածքում, իսկ մարտի վարման հեռավորության նվազումը կարող է հանգեցնել յուրայինների ոչնչացմանը, ինչը կհանգեցնի նրա ուժերի և միջոցների պարտության հավանականության մեծացման: Մարտական պատրաստությունը, որտեղ անհամաչափ մեծ ուշադրություն է դարձվում ոչ թե ծանր զենքին, այլ հրաձգայինին, կարող է խորացնել այս խնդիրը: Եթե զինծառայողները պատկերացում չունեն առ այն, թե ինչպես է տարածվում պայթյունի հարվածային ալիքը քաղաքային կառուցապատման պայմաններում, նրանք կդառնան դժբախտ պատահարների զոհ: «Յուրայիններին» և «օտարներին» տարբերելիս պետք է հաշվի առնել, որ որոշ զորային կազմավորումներ կարող են զրահատեխնիկայից անցնել հետիոտն պարեկության, ինչպես նաև կարող են հրաման ստանալ անցնել «յուրային» ստորաբաժանումների միջև սահմանազատիչ գծերը:

Քաղաքային պայմաններում կրակի վարումը հանգեցնում է նրան, որ տարբեր մակարդակներում մարտավարական միավորների պարտականությունները համընկնում են կամ հատվում, քանի որ դրանց միջև ընկած ինտերվալը սեղմվում է: Հետևաբար, կարևոր նշանակետի հետապնդումը կարող է իրականացվել նույն մարտական տարածքում, որտեղ հետախուզական և ոչնչացման միջոցները փորձում են հայտնաբերել և ոչնչացնել իրենց սեփական շարժական թիրախները: Սա հանգեցնում է նրան, որ նույն պատասխանատվության գոտում գործում են մարտական գործողությունների վարման տարբեր կանոններ՝ ըստ թիրախների բաժանմամբ: Հաշվի առնելով մեծ կոնֆլիկտներում նշանացուցման մասշտաբները, սխալներ թույլ տալու զգալի ռիսկ կա, եթե թիրախները միանգամից մշակվեն նշանացուցման մի քանի գործիքներով: Բացատրել կարողությունը, թե ինչպես են զորքերը իրականացնում կրակը, կարևոր է ոչ միայն ՄՄԻ - ի պահպանման ապահովման, այլև տեղեկատվական միջավայրի ձևավորման համար, այդ թվում՝ քաղաքացիական բնակչության պատկերացումներն ուղեկցող ռիսկերի վերաբերյալ:

Գազայի հակամարտությունից դեռ շատ դասեր կարելի է քաղել, սակայն այս փուլում ավելի շատ ժամանակ է պահանջվում, որպեսզի համապատասխան մանրամասները հասանելի դառնան վերլուծության համար: Հետևաբար, այս աշխատանքը ավելի շուտ ելակետ է, քան եզրակացություն:

Հեղինակների մասին

Ջեք Ուոթլինգը RUSI (պաշտպանական հետազոտությունների Թագավորական միացյալ ինստիտուտ) ցամաքային պատերազմների ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող է: Ջեքը սերտորեն համագործակցում է բրիտանական բանակի հետ՝ օպերացիաների հայեցակարգերի մշակման և ապագա օպերատիվ իրավիճակի գնահատման գործում, ինչպես նաև իրականացնում է ժամանակակից հակամարտությունների օպերատիվ վերլուծություն: Նրա դոկտորական ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարասկզբի Քաղաքացիական պատերազմին Մեծ Բրիտանիայի քաղաքական արձագանքների էվոլյուցիայի ուսումնասիրությանը:

Ջեքը շատ է աշխատել Ուկրաինայում, Իրաքում, Եմենում, Մալիում, Ռուանդայում և այլ երկրներում: Նա միջազգային գիտաշխատող է Վաշինգտոնի Վիլսոնի կենտրոնում:

Նիկ Ռեյնոլդսը RUSI ցամաքային պատերազմների ուսումնասիրության բաժնի գիտաշխատող է: Նիկի գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է ցամաքային զորքերը, մարտական մոդելավորումը և նմանակումը: Նախքան RUSI-ին միանալը նա աշխատել է Constellis ընկերությունում (ԱՄՆ մասնավոր պաշտպանական ձեռնարկություն):

Աղբյուրը. ԻACT